

Խմբագրական

ՀԱՅՈՒՀԻՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶՍՏԱԳՐԱԿԱՆ ՄԵՐ ԵՐԹԻՆ ՄԷՋ



Ամեն տարի, Մարտի 8-ին՝ կը նշուի կանանց միջազգային տօնը, անգամ մը եւս իմաստաւորելով եւ արժեւորելով կանանց տեղն ու դերը մարդկային քաղաքակրթութեան երթին մէջ:

Չազարամեակներու գոյութեան մեր խորտուբորտ ճանապարհին, հայ մօր եւ հայ կնոջ առաքելութիւնը վճռորոշ է եղած՝ հայ օճախի պահպանման ու յարատեւման կենսական գերխնդրին մէջ, հայ հոգեւոր, բարոյական, մշակութային արժէքներու որդւոց-որդի փոխանցման, հայ ինքնութեան անաղարտ պահպանման

կարեւորագոյն խնդրին մէջ: Եթէ կրցեր ենք դիմակայել ընդ հուր եւ ընդ սուր, մեր պատմութեան բազում արհաւիրքներուն ու փոթորիկներուն, ատիկա մեծաւ մասամբ կը պարտինք հայ մօր, հայ կնոջ, հայուհիին: Այնքան դիպուկ են Գարեգին Նժդեհի խօսքերը՝ հայուհիին հայրենասիրութեան ու հայրենանուիրումի վսեմ առաքինութիւնը բնութագրող.-

«Չայուհի՛ն, որին կարելի է ճանաչել հազարաւոր օտարուհիների մէջ այն կնիքով, որ նրա ճակատին դրել է դարերու տառապանքը...Նրա հայրենասիրութիւնը՝ աստուածային կրակ, բոց ու ջերմութիւն, պիտի արթնացնի թմրած առիւծը իր ժողովրդի մէջ, պիտի բարձրացնի մեր առօրեայ կեանքի թափը, պիտի քաղցրացնի ու հեշտացնի անձնագոհութիւնը: Ոգիացած հայրենասիրութիւն, որից ժողովուրդները ստեղծում են մի հրաշագործ ոյժ, անհրաժեշտ Չայրենիքների անկախութեան ու հզօրութեան համար»:

Այդ հրաշագործ ուժով տոգորուած հայուհին է, որ կրցեր է ծնունդ եւ մնունդ տալ, հայեցի դաստիարակութիւն ջամբել, ազգային աննկուն ոգի փոխանցել հայ իրերայաջորդ սերունդներուն, իր էական դերակատարումը բերելով՝ հայոց պատմութեան անխափան երթին...

Նման հայուհիներու ցայտուն եւ հերոսական օրինակ կը մնան՝ 5-րդ դարու Աւարայրի ոգիով զինուած «Փափկասուն Տիկնայք Չայոց Աշխարհի», որոնք ամենէն հարազատ վկաները դարձան հայ կնոջ անպարտելի հայրենասիրութեան ոգիին ու գիտակցութեան: Միքայել Նալպանտեան անոնց մասին կը գրէ. « Նոքա այրութիւն ցոյց տուեցին իւրեանց կանացի կերպարանքի տակ եւ երբեք չկամեցան, որ Նայէին Նոցա վերա որպէս մի խաղալիք կամ որպէս մի հագնուած զուգուած պանդուկապատանքի վերա...» եւ ամեն զոհողութիւն յանձն առին պահել-պահպանելու հայրենական օճախն ու հայրենեաց արժանապատուութիւնը:



Հայուհիներ մեծ դեր են ունեցած՝ ոչ միայն հայեցի դաստիարակութեան եւ մշակութային գործունեութեան ոլորտներէն ներս, այլեւ անոնք եղած են քաղաքական եւ ռազմական դեկաւարներ, օտար զաւթիչներուն դէմ հայկական դիմադրութեան արիակորով մասնակիցներ...

Հին դարերուն, ունեցած ենք կին թագաւորներ, ինչպէս Երատոն, Փառանձեմը, Չապելը: Յայտնի է նաեւ որ հայկական արքունիքներուն մէջ, թագաւորներու կանայք, զորս կոչեր ենք Հայոց տիկիններ, վճռորոշ դերակատարում ունեցած են երկրի կառավարման ոլորտէն ներս:

Ժամանակակից հասկացողութեամբ, հայ կանանց հասարակական-քաղաքական աշխուժացումը սկսած է գերազանցօրէն 19-րդ դարուն, երբ հայ կեանքի զարթօնքին իրենց ուրոյն դերակատարումը բերին հայ յառաջադէմ հայուհիներ, ինչպէս Սրբուհի Տիւսաբ, Սիպի, Չապել Եսայեան, Արշակունի Թեոդիկ եւ ուրիշներ, որոնք հիմնադրեցին «Ազգանուէր Հայուհեաց Միութիւնը», օրիորդաց դպրոցներ բացին հայկական գաւառներու մէջ եւ այլուր, մեծապէս նպաստելով հայուհիներու լուսաւորութեան, ինչպէս նաեւ՝ անոնց ազատագրութեան գործընթացին: Վերոնշեալ կանանց նախաձեռնութեամբ էր, գերազանցօրէն, որ 19-րդ դարու վերջերը կազմուեցաւ «Կանանց իրաւունքներու հռչակագիր»ի նախագիծը, հետեւեալ հիմնական դրոյթներով՝

- հաւասար իրաւունքներ տղամարդկանց և կանանց համար,
- մասնագիտութեան ընտրութեան իրաւունք,
- բարձրագոյն կրթութիւն ստանալու իրաւունք՝ որպէս երեխայի դաստիարակութեան բարելաւման միջոց,
- համայնքի գործունեութեան մէջ կանանց հաւասար մասնակցութեան իրաւունք,
- ազգի պահպանման եւ անոր մշակոյթի փոխանցման մէջ կնոջ դերի ընդունում:

Իսլամական թուրքոյ մէջ, յայտնապէս նման հռչակագրին ի յայտ գալը իսկապէս ալ յեղափոխական մտքի արգասիք էր, որ Էապէս կը բարձրացներ հայ կնոջ դերը հանրային-հասարակական կեանքի մէջ: Եւ այսպէս, հայուհիներէն շատեր կը լծուէին տնտեսական-հասարակական կենսունակ գործունեութեան, բանալով արհեստանոցներ, գործարաններ, խմբագրելով գրական հանդեսներ, դառնալով մշակութային-հասարակական գործիչներ...

Եւ ոչ միայն: Հայ կիներէն շատեր իրենց մասնակցութիւնը կը բերէին Արեւմտահայաստանի մէջ սկիզբ առած եւ ազգային ազատագրութեան միտող ֆետայական շարժման: Յայտնի դարձած անուններ են՝ Աղբիւր Սերոբի կինը՝ Սօսէն, Գեորգ Չաւուշի հաւատարիմ զինակից՝ Եղսոն, կին-ֆետայի՝ Հայօ-Հայաստանը, Օրիորդ Սաթենիկ Մատինեանը, Մարօ Մակարեանը, Սաթօ Օհանջանեանը, Կիւլիզարը, Սասունցի Շաքէն եւ ուրիշներ... : Տակաւին, բազմաթիւ կին հայդուկներ հերոսաբար պիտի կռուէին տղամարդկանց կողքին, ոյժ ու կորով պիտի ներշնչէին անոնց, հաւատք՝ սեփական ոյժերու եւ յաղթանակի նկատմամբ: Հայուհիներ նաեւ անհրաժեշտ



տեղեկութիւններ, զէնք ու զինամթերք, հաց ու ջուր պիտի հասցնէին մարտիկներուն եւ վիրաւորներուն...

Տակաւին, Հայաստանի առաջին Հանրապետութիւնը առաջիններէն կ'ըլլար աշխարհիս մէջ, որ ընտրելու եւ ընտրուելու իրաւունք կու տար կանանց՝ հանրային կառոյցներէն ներս: Աւելին, 1920 թուականին, ճաբոնիայի մօտ Հայաստանի դեսպան կը նշանակուէր Տիանա Աբգարը, ինչ որ աննախադէպ էր համաշխարհային դիւանագիտութեան պատմութեան մէջ:

Հայ կինը այսօր ալ պատնէշի վրայ է՝ ազգային-հասարակական-պետական կեանքի բազում բնագաւառներուն մէջ, ստանձնելով պատասխանատու պաշտօններ, մեր ազգային-հայրենական նաւը ճիշդ առաջնորդելու ուղղութեամբ, մեր ազգային իրաւունքներու, հայ Դատի պահանջատիրութեան հետապնդման գծով, ազգային արժէքներու պահպանման, ազատ, արժանապատիւ եւ հզօր պետականութեան կերտման, Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման գերագոյն նպատակներու կենսագործման համար:

Այս բոլորը օղակներն են ազգային-ազատագրական շարունակական պայքարին որ վերջ չունի երբեք...: Անկկա մերթ պիտի մղուի արտաքին թշնամիին դէմ, որ բռնախլած է արեւմտահայաստանը, յափշտակած է ազգային մեր իրաւունքները եւ տակաւին կը սպառնայ ազգային մեր գոյութեան...Մերթ՝ մեզմէ իւրաքանչիւրին մէջ, երբ օտար ու խորթ չարժէքներ կը ներխուժեն մեր կեանքէն ներս, մեր ընտանիքներէն ներս, մեր կառոյցներէն ներս, սպառնալով մեր հայկականութեան, մեր մայրենիին անաղարտ պահպանման, մեր հոգեբարոյական արժէքներուն ու ինքնութեան, երբ նիւթապաշտութիւնն ու քաղքենիացման տենդը կը սպաննէ ազգայինը, հոգեւորը հայ կեանքէն ներս: Անկկա Էապէս պայքար եւ մաքառում է յանուն հայութեան եւ հայկականութեան ազատ, արդար, արժանապատիւ գոյութեան ու յարատեւման՝ մեր հայրենաց սուրբ հողին վրայ, ամբողջական մէկ ու միացեալ Հայաստանի հզօր տեսլականով...:

Այսօր, հայուհին պիտի ըլլայ հիմնական յառաջապահը ազգային զարթօնքին, համահայկական Նոր մտածողութեան կազմաւորումին, համազգային Նոր գաղափարախօսութեան ձեւաւորումին՝ ազգային իրաւ միասնութեան ոգիին, որոնք հիմնաքարն են որոշապէս հայութեան Նոր վերածնունդին ի Հայաստան, Արցախ եւ Սփիւռք, վեր ելլելով նեղ-անձնական, խմբակային, հատուածական ամէն տեսակի նկատառումներէն եւ ի խնդիր համահայկական մեր գերագոյն շահերուն եւ իտեալներուն...: Սա կ'ենթադրէ Էապէս յեղափոխական մտայնութիւն եւ գործելակերպ, որոնց սկզբնակէտը դրուեցաւ Հայաստանի Հանրապետութենէն ներս, 2018-ի թաւշեայ, ոչ բռնի, սիրոյ եւ համերաշխութեան յեղափոխութեամբ, որ պէտք է վարարէ համայն հայութիւնը, իրաւ յաջողութեան հասնելու համար...



Այս խոր գիտակցութեամբ զինուած, ազգային-ազատագրական պայքարը պիտի մղուի անսկուն եւ անկոտրում կամքով, բարձր պատասխանատուութեամբ եւ յանձնառութեամբ, խորագոյն արժանապատուութեամբ, եւ անոր գլխաւոր ջահակիրները կը մնան ըլլալ ՀԱՅՈՒՅԻՆԵՐԸ, որոնք ի բնէ ծնողն ու սնողն են ԱԶԳԻՆ, անոր ոգին շնչաւորողը, զայն արթուն պահողը, զայն սերունդէ-սերունդ փոխանցողը...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Հարցազրոյց

«Հայաստանում չեն ճանաչում սփիւռքը». Եւրոպայի հայերի համագումարի նախագահ Կարօ Յակոբեան

Աննա Զախարեան



Եւրոպայի հայերի համագումարի նախագահ Կարօ Յակոբեանը կարծում է, որ սփիւռքի 95 տոկոսը այս կամ այն պատճառով որեւէ մասնակցութիւն չունի սփիւռքի ու Հայաստանի կեանքին՝ պարփակուած լինելով ինքն իր մէջ: Նա կարծում է, որ Սփիւռքի նախարարութեան փոխարէն ստեղծուելիք կառոյցի հիմնական նպատակներից մէկը պետք է լինի այդ մարդկանց հետ համագործակցութիւնը: Կարօ Յակոբեանի հետ մեր զրոյցը՝ ստորեւ.

- Պարոն Յակոբեան, Դուք պարբերաբար լինում էք Հայաստանում: Այս անգամ որն է այցելութեան նպատակը, եթէ, իհարկէ, անձնական չէ:

- Յաճախ եմ գալիս Հայաստան, տարին մի քանի անգամ: Բայց այս անգամ մի քիչ աւելի երկար եմ մնալու եւ հիմնականում նպատակը այն է, որ կազմակերպութեան կողմից այստեղ կան աշխատանքներ, որոնք կարելի է շարունակել՝ Սփիւռք-Հայաստան կապերի ամրապնդման ուղղուած հանդիպումներ եւ այլն: Անցեալ անգամ, երբ որ եկայ Հայաստան, մի քանի անգամ հանդիպեցի կրթութեան եւ գիտութեան նախարար Արայիկ Յարութիւնեանի հետ, եւ նկատի ունենալով իմ մասնագիտութիւնը տեղեկատուական տեխնոլոգիաների (SS) ոլորտում, շուտեական կրթական շրջանակներում երկարամեայ փորձը, որ ունէի, ցանկութիւն յայտնեցի փոխանցել այստեղ: Եւ հասանք այն եզրակացութեան, որ լաւ կը լինէր աւագ դպրոցների այն ուսուցիչների համար, ովքեր դասաւանդում են տուեալ առարկան, վերապատրաստման կուրսեր կազմակերպել: Ծրագիր ունեւ: Հիմա սպասում եմ: Սա առաջին քայլն է: Յետոյ կարելի է այս ծրագիրը ընդլայնել: Յաջորդ շաբաթուանից մտածեցի Արտաշատի աւագ դպրոցում աշակերտներին սովորեցնել ծրագրաւորում, վեբ դիզայն եւ այլն, ըստ իրենց ցանկութեան: Սա աւելի շատ անձնական ձեռնարկ է, որովհետեւ երբ նայեցի հանրակրթութեան համապատասխան ծրագրերը, տեսայ, որ բաւական աշխատանքի անհրաժեշտութիւն կայ: Ծրագրերը շատ հնացած են, լրիւ բարեփոխման կարիք կայ, այս ուղղութեամբ հարկաւոր է աշխատանք տանել, մանաւանդ նկատի ունենալով ԿԳ նախարարութեան հիմնական նպատակադրումները կամ ընդհանրապէս երկրում SS ոլորտի զարգացումը: Թումոն կայ, շատ լաւ է, բայց հանրակրթութիւնը ուրիշ է: Ամբողջ երկրով մէկ պետք է տարածուի:

- Կառավարութիւնը SS ոլորտը հռչակել է գերակայ ուղղութիւններից մէկը: Դուք, որպէս մասնագետ, նոյնպէ՞ս տեսնում էք այդ պոտենցիալը: Նպատակը իրատեսակա՞ն է, ըստ ձեզ:

- Շատ լաւ պոտենցիալ կայ: Վերապատրաստումը որ սկսուի, առաջին փուլում կ'ընդգրկուի 20-25 ուսուցիչ: Յետոյ նրանց միջից կարելի է ընտրել 5-ին, որոնք իրենք կարող են շարունակել:



Ցանցային կերպով շատ կարճ ժամանակում հնարաւոր կը լինի ամբողջ ուսուցիչներին վերապատասխանել եւ տարածել կրթական համակարգում: Համալսարանի իւրաքանչիւր ճիւղ կարիք ունի SS-ի, ծրագրաւորման, առանց ծրագրաւորման հնարաւոր չէ: Եւ եթէ այդ արմատը ունենանք, այն ժամանակ դիւրին կը լինի նաեւ համալսարանում: Հնարաւոր էր համալսարանում դասաւանդել ուսանողներին, բայց դա կը դառնայ միայն այդ խմբի հարցը, իսկ այս պարագայում առաւել նպատակայարարմար էր այս գիտութիւնը տարածել դպրոցական շրջանում, հիմք դնել այդտեղ:

- Պարոն Յակոբեան, երբ յեղափոխութիւնից յետոյ պարզ դարձաւ, որ իշխանութիւնները մտադիր են լուծարել սփիւռքի նախարարութիւնը, բողոքի ալիք բարձրացաւ, չնայած նախարարութեան ստեղծումն էլ դժգոհութիւնների տեղիք էր տուել: Ձեր դիտարկումներով, սփիւռքի հետ յարաբերութիւններում նախարարութեան առկայութիւնը իսկապէ՞ս սկզբունքային նշանակութիւն ունի եւ ինչքանո՞վ Է ընդունելի վարչապետի յայտարարութիւնը, որ վարչապետի աշխատակազմը կ'ունենայ սփիւռքի գծով յատուկ յանձնարարութիւնների դեսպան:

- Այս հարցին պատասխան տալու համար հարկաւոր է նախ խօսել մտածուած եւ յետոյ համակողմանի, որպէսզի թիրիմացութիւնների առիթ չտայ, եւ մարդը իմանայ իսկապէս ինչը ինչոց է: Մեր կարծիքով, երբ յեղափոխութիւնից յետոյ խօսուեց նոր Հայաստանի մասին, պիտի նաեւ լինի նոր սփիւռք: Նոր Հայաստան, նոր սփիւռք: Մենք սեպտեմբերին ունեցանք Եւրոպայի մակարդակով (գուցէ եւ ամբողջ սփիւռքի մէջ) առաջին համաժողովը, որին մասնակցեցին Եւրոպայի 10-12 երկրներից ներկայացուցիչներ, խորհրդակցեցինք՝ ինչն է մեր նպատակը, ինչ կարող ենք անել այս ուղղութեամբ: Այսինքն՝ այդ աշխատանքը մենք սկսեցինք՝ նոր որակ տալու Հայաստան եւ Սփիւռք կապերին: Խնդիրը այստեղ այնքան ձեւը չէր, որքան որակը: Եւ այս առումով հսկայական փոփոխութիւններ պէտք է լինէին նաեւ Սփիւռքում: Եւ սփիւռք-Հայաստան այս կապերի մէջ պիտի նայել նախարարութեան տասը տարիների աշխատանքը, արդիւնքը տեսնել, եւ տեսնել, թէ ինչ կառոյց պէտք է ունենալ ապագայում ու ինչ բովանդակութիւն: Իրականութիւնը այն է, որ սփիւռքի նախարարութիւնը չարդարացրեց սպասելիքները: Թէպէտեւ մշակութային գետնում, հայապահպանման գետնում բաւականին դրական աշխատանքներ կատարեցին, բայց դա սփիւռքի նախարարութեան ֆունկցիա չէ: Նախարարութիւնը պիտի ունենայ իր իւրայատուկ ֆունկցիան, բովանդակութիւնը եւ այլն: Ընդհանրապէս բոլոր փոփոխութիւնների վերաբերեալ կայ երկու մօտեցում՝ մէկը պահպանողական, մէկը՝ զարգացում, փոփոխութիւն, ռեֆորմ կատարելու: Եւ սա արդէն քաղաքական բնոյթ ունի: Կուսակցութիւնները (Դաշնակցութիւնն աւելի շատ, Հնչակեանը եւ Ռամկավարը՝ ոչ այդքան), եկեղեցին, այն կառոյցներն են, որ ընդհանրապէս փոփոխութեանը դէմ են: Արամ կաթողիկոսը անցեալ օրն էր ասում ի՞նչ նոր Հայաստանի մասին է խօսքը. Հայաստանը մէկ է: Մարդը բովանդակութիւնը չի նայում՝ նոր Հայաստան ասելով ինչ ենք հասկանում: Նոր Հայաստան ասելով նկատի ունենք բովանդակութիւնը՝ ինչ հեռանկարներ կան տնտեսական, քաղաքական միջավայրում: Իսկ եթէ նոր Հայաստան չպիտի լինի, նոր սփիւռք էլ իմաստ չունի, սփիւռքը պիտի մնայ նոյն կերպով: Այս առումով մեր մօտեցումը միշտ եղել է, որ հիմնականում կարելորդ որեւէ կառոյցի գոյութիւնն է: Եւ կառավարութեան ծրագրերի մէջ չկար սփիւռքի նկատմամբ անտեսում, այլ ընդհակառակը խորքային մօտեցում էր: Այս առումով մեզ համար այն չէ, որ մենք զգացմունքային կերպով ասենք՝ վայ նախարարութիւնը վերանում է: Ասացի, Սփիւռքի նախարարութիւնը նախարարութեան ֆունկցիա չէր պարունակում իր մէջ: Սա է խնդիրը, չեմ ուզում աւելի խորանալ:



Նոր կառոյցը պէտք է լինի աւելի գործունեայ: Իհարկէ հարկաւոր է նախքան այդ կառոյցի ստեղծումը խորհրդակցութիւն լինի սփիւռքի տարբեր մարմինների հետ: Ասում է սփիւռքի հիմնական ներկայացուցիչների հետ պէտք է խօսուի: Բայց հիմնական ներկայացուցիչ ասելով ինչ ենք հասկանում: Չպիտի մենք անտեսենք որեւէ կառոյց, որեւէ կազմակերպութիւն, որեւէ Նոյնիսկ անհատ, որ հետաքրքրուած է եղել: Հնարաւոր չէ բոլորի հետ խորհրդակցութիւն ունենալ, բայց կարելի է հանրային դարձնել այս հարցը: Այս փոխարարներութիւնները պիտի մեր կարծիքով ունենան համընդհանուր բնոյթ, ոչ միակողմանի, ինչպէս անցեալում է եղել: Կարելի է ասել 95 տոկոս հայութիւնը ընդհանրապէս որեւէ կազմակերպութեան հետ կապ չունի, այս 95 տոկոսը անտեսուած ուժ է: Դրա պատճառները տարբեր են եղել: Նոր կառոյցի նպատակը պէտք է լինի այդ 95 տոկոսը: Երբ որ խօսում է սփիւռքի պոտենցիալի մասին՝ տնտեսական, գիտական, կրթական, այս 95 տոկոսի մօտ է իրականում: Եւ եթէ իշխանութիւնը, կառավարութիւնը սփիւռքի կառոյցները կարողանան այս սփիւռքի մի որոշակի զգալի մասը ներգրաւել ազգային գործի մէջ, մենք ազգային առումով յաջողութիւն կ'ունենանք:

- Նախադրեալներ տեսնո՞ւմ էք, որ դա կը յաջողուի:

- Այո, այսինքն՝ մենք պիտի նայենք՝ այս բոլորին ներգրաւելու համար ինչ միջոցներ են հարկաւոր եւ ինչ գործողութիւններ պիտի կատարուին: Առաջին հերթին պէտք է ճանաչել սփիւռքը: Ցաւօք Հայաստանի մէջ չեն ճանաչում սփիւռքը: Մի մասը գուցէ պատճառը այն է, որ այդ կապերը այնպէս են եղել, որ սխալ մօտեցում ունենան սփիւռքի կառոյցների մասին, մի մասն էլ այն է, որ սփիւռքում նաեւ ինքնաճանաչման հարցը այնպէս չէ դրուած: ...Այսպիսի մի ինչոր կայ, թէ ինչու է սփիւռքը այսքան ցրիւ, հակասութիւններ կան եւ այլն: Կայ դպրոց, կայ մամուլ, կայ եկեղեցի: Եւ կան կուսակցութիւններ: Աւանդակա՛ն, այս բառը գործածենք: Կուսակցութիւնները սփիւռքում իրենց բնական, բաղաբանական աշխատանքի միջավայրը կորցրին: Կուսակցութիւնների հիմնական նպատակն է հասնել իշխանութեան՝ իրագործելու իրենց բաղաբանական նպատակները: Երբ որ այդ կառոյցները կորցնում են իրենց երկիրը, աշխատելու վայրը, գոյութիւնը պահելու համար պիտի զբաղուեն մշակոյթով, դպրոցով, եկեղեցով, եւ առաջանում է ազգային-հասարակական կառոյցների կուսակցականացում: Երբ որ աղպէս է լինում, այստեղից առաջանում են բախումները, նախանձը, տարածայնութիւնները, մրցակցութիւնը: Եւ ունենք այն, ինչ ունենք: Հիմքը սա է: Կուսակցութիւնները պատրաստ չեն փոխելու իրենց մենաշնորհ ձեւը: Հայաստանի մէջ վերացել կամ վերանում է մենաշնորհը: Սփիւռքում էլ պիտի վերանայ: Այս իրականութիւնը փոխելու համար ամենից կարեւոր գրաւականը Հայաստանի, յեղափոխակա՛ն Հայաստանի ներգործութիւնն է, որին մարդիկ արդէն վստահում են: Հայաստանն այն ուժն է, որ այդ հնարաւորութիւնը ունի աջակից լինելու սփիւռքի բոլոր ուժերին՝ կուսակցութիւններից սկսած մինչեւ եկեղեցի, որպէսզի կարողանայ համախմբուել: Սփիւռքի այս նոր կառոյցը պիտի այդ ուղղութեամբ աշխատի: Եթէ նպատակը լինի դա, հսկայական ալիք կը ստեղծի սփիւռքի մէջ: Մարդիկ սպասողական վիճակի մէջ են, չգիտեն ինչ անեն, ում հետ կապուեն, ում հետ չկապուեն, ինչ հնարաւորութիւններ կան: Եթէ Հայաստանի իշխանութիւնների աջակցութիւնը չլինի, շատ դժուար է:

Յօդուածներ

Ընթերցման առաքինութիւնը, որ կար եւ անոր հակամշակութացնող տեղատուութիւնը

Յ. ՊԱԼԵԱՆ



Ըսե՛ ինծի՝ ի՞նչ կը կարդաս, քեզի պիտի ըսեմ, թէ ո՛վ ես դուն:

Բայց քեզ անելի լաւ պիտի ճանչնամ,

եթէ ինծի ըսես, թէ ի՞նչ կրկին կը կարդաս:

Ֆրանսուա Մորիաք,

Ֆրանսացի գրող, Նոպելեան դափնեկիր

Սփիւռքի բաբախող սիրտ համարուող հայկական համայնքին մէջ՝ Պէյրութ, տասնհինգ օրուան այցելութեան մը ընթացքին, ներկայ եղայ երեք բանաստեղծական երեկոներու: Բանաստեղծները հայ էին: Սփիւռքի մէջ հայ գրականութիւնը դեռ կ'ապրի, թէեւ՝ հետզհետէ կծկուող շրջանակի մէջ, գիրքեր կը հրատարակուին, կը ներկայացուին: Բայց տխրութեամբ նկատեցի, որ գիրքերը հեղինակներուն կողմէ կրկին նուէր կը տրուէին, անոնցմէ մէկուն գիրքերը կը վաճառուէին ոչ թէ հեղինակին աշխատանքը գնահատելու համար, այլ՝ այն խոստումով, որ գոյացած գումարը նուէր պիտի տրուէր Հայաստանի կամ Արցախի մէջ իրագործուելիք նախաձեռնութեան մը:

Գիր-գրականութեան ընթերցման տեղատուութիւնը այդպէս ալ ներկայ ժամանակի վերագրուած համատարած ախտ չէ ուրիշներու մօտ, ինչպէս որ ան է հայկական իրականութեան մէջ: Ճափոնցի Հարուքի Մուրաբամի գրողին նոր գիրքը լոյս կը տեսնէ 700.000 տպաքանակով եւ նոյն օրն իսկ կը սկսի թարգմանուիլ բազմաթիւ օտար լեզուներու: Այդ 700.000



գիրքերը նուէր չեն տրուիր եւ ոչ ալ՝ անոնց թարգմանութիւնները: Եւ հեղինակը ճափոներէն հրատարակութեան եւ թարգմանութիւններուն համար պատուագին կը ստանայ: Գրողը իր գրիչով ապրելու իրաւունք ունի:

Այդ գիտակից եւ քաղաքակիրթ իրաւունքը ընթերցողը կու տայ:

Մարդիկ գիրք կը գնեն եւ կը կարդան:

Պետք է յիշել, որ մօտաւոր անցեալին Հայաստանի մէջ գիրքերու տպաքանակը տասնեակ հազարաւորներով էր: Կազմաւորման (կազմալուծման) ընթացքի մէջ եղող սփիւռք(ներ)ը գրատուներ ունէր, Փարիզ եւ Նիւ Եորք, անոնք տասնեակներով էին Սուրիոյ եւ Լիբանանի մէջ: Հայկական թերթերը թերթօնի ձեւով գիրքեր կը հրատարակէին, հայ մարդիկ գանոնք ինամբով կը պահէին, կը կազմէին, անոնք իրենց գրադարանին մէջ տեղ ունէին: Հայկական գրադարաններէ վարձով գիրքեր փոխ կ'անուէին:

Յիշեցէ՛ք, հաշուեցէ՛ք եւ բաղդատեցէ՛ք:

Ի՞նչ պատահած է հայկական հաւաքականութիւններուն, ո՞ր կ'երթանք, ո՞ր կրնանք հասնի, կամ հասած ենք:

Ա՛յս ալ այլասերման ցուցանիշ չէ՞: Չի՞ մտահոգեր ղեկավարութիւնները: Կարգախօսներէ առաջ եւ վերջ կը պատահի՞, որ անոնք հարցը օրակարգ դարձնեն եւ լուծումներ փնտռեն ու գտնեն:

Գիրք գնել եւ կարդալ՝ մարդկային եւ մշակութային որակ է: Մեր պարագային ան պետք է ըլլայ նաեւ ազգային որակ:

Երբեմն բեմերէ եւ խորաններէ պետք է կրկնել Ֆրանսուա Մորիաքի խօսքը. «Ըսէ՛ ինծի՝ ի՞նչ կը կարդաս, քեզի պիտի ըսես, թէ ո՛վ ես դուն: Բայց քեզ աւելի լաւ պիտի ճանչնամ, եթէ ինծի ըսես, թէ ի՞նչ կրկին կը կարդաս»: Հարցումը պետք է ուղղել անհատներուն եւ հաւաքականութիւններուն: Այսինքն դեռ ՀԱՅ կոչուած մարդիկ, երբ իրենց ժողովուրդին գիրքերը չեն կարդար, ի՞նչ են: Պետք չէ արդարացումներ գտնել՝ թաքնուելով համացանցի, այ-ֆոնի, հեռատեսիլի փաստարկներու ետին, ըստ որոնց, ամէն բան կը գտնեն անոնց եթերին մէջ:

Հարցում մը. ճափոնցիէ՞ն աւելի համացանցի եւ այ-ֆոնի մասնագետ ենք՝ բացատրելու եւ արդարացնելու համար գիր-գրականութենէ մեր խորթացումը:

Գիր-գրականութիւնը ո՛չ պատէն կախուելիք գեղօր է, ո՛չ ալ թանկարժէք գեղանկար: Ան հոգիներու ազնուացման դարպասն է: Մարդկային զգացումներու, գաղափարներու եւ փորձի ժառանգութիւն կը բերէ: Բոյսերը եւ անասունները նման ժառանգութիւն չեն ստանար: Իսկ մարդ արարածը շարունակութիւն ըլլալու համար այդ ժառանգութեան պետք ունի, անով շարունակութիւն կ'ըլլայ, որ տարբեր որակ է կտակուած շէնքէ, մարմարէ կամ դրամատան հաշիւէ: Անոր ճամբով կը հասկնանք, որ մեր գոյութիւնը իմաստ ունի, իմաստներ, որ չի սահմանափակուիր տպաւորիչ հոգեճաշով կամ գերեզմանատան տապանաքարով, պարզապէս կը հասկնանք, որ ո՛չ քար ենք եւ ո՛չ ալ բոյս: Ի վերջոյ, քանի մը սերունդ ետք, լաւագոյն պարագային, ի՞նչ կ'ըսեն տապանաքարերը:

Քիչ մըն ալ մտածենք վարժապետի եւ դաստիարակի պէս, քանի որ մարդ արարածը ամբողջ կենքի ընթացքին կը սորվի, կը դաստիարակուի կամ ինքզինք կը դաստիարակէ, այդ



պատճառով ալ թերթ կը կարդայ, հեռատեսիլի դիմաց կը նստի, հիմա ալ Դիմատետրով կը կարծէ զարգանալ: Տարրական փորձը ցոյց կու տայ, որ ընթերցումը նոր հորիզոն կը բանայ, ան ըլլայ գիտական, քաղաքական, բարոյական, արուեստներու, բարոյականի, իմաստութեան, ընդհանուր բնորոշումով՝ աշխարհաճանաչողութեան: Ան միաժամանակ հաճելի զբօսանք է, ժամանակին հետ քայլ պահելու եւ ինքնաթարմացման կը նպաստէ: Չբօսանք բառը ֆրանսերէնի մէջ այդ իմաստը ունի, recreation, վերստին ստեղծել: Այդպէս է ընթերցումը, քանի որ գրուածը կարդալով՝ մենք կ'ընենք մե՛ր ընթերցումը, մեկնելով ընթերցուած էջէն՝ մեր բացատրութիւնը կը փնտռենք, նոյն ձեւով չենք հակազդեր, նոյն ձեւով չենք թրթռար:

Գործնական տեսանկիւնէ, ընթերցումը մեր լեզուի իմացութեան կը նպաստէ, քանի որ իւրաքանչիւր գրողի հետ լեզուն վերածնունդ կ'ապրի: Նարեկացիի, Մեծարեւոյցի կամ Պարոյր Սեւակի լեզուն մեր առօրեայ նպարավաճառային հասարակ տեղիք եւ կամ քիչէ քաղաքական ճողմաբանութիւնը չէ, որ տեղէ մը եւ տեղ մը արդէն լուծածի տպաւորութիւն կը ձգէ: Իսկ եթէ հետեւինք գիտութեան թելադրութեան, ան յիշողութեան մարզանք է, ուղեղի ճոկինկ, որ անտառի տեսարաններէն տարբեր դռներ կը բանայ մեր երեւակայութեան առջեւ: Ըստ բժիշկներուն, ան կը կանխէ նաեւ յիշողութեան կորուստի հիւանդութիւնը՝ ալզայմըրը, որուն մասին յաճախ կը լսենք եւ կը խօսինք: Ընթերցանութիւնը այս ուղղութեամբ ինքնադարմանման միջոց է:

Ոչ ոք կը կասկածի, որ ընթերցումը մարզանք է բաղդատութիւններով մտածելու, այսինքն կը վարժուինք վերլուծել եւ դատել՝ փոխանակ մալու քարացած դատումներու մէջ:

Այժմեական հարց մըն ալ: Ընդհանրացող սովորութիւն է արդիական սարքերու (tablette)-ներու վրայ, գիրք կարդալ, e-book, որ գործնական է, բայց լրացուցիչ պետք է ըլլայ: Փաստուած է նաեւ, որ թուղթի վրայ գրուածի ընթերցումը անելի օգտակար է:

Երբ սովորութիւն չունինք գիրք կարդալու, երբ չենք սիրեր կարդալ, փորձենք մեզ հետաքրքրող նիւթերու մասին գիրքեր գտնել, անոնք այնքան բազմաթիւ են, ընթերցումի պահ մը ստեղծել օրուան ընթացքին:

Ի հարկէ անելի լաւ է նաեւ երբ ընթերցումը նպատակ մը կը հետապնդէ, ան ուսուցիչ կրնայ ըլլալ, որ մենք մեզ բարելաւենք, նոյնիսկ զբօսաշրջիկը կրնայ ընթերցումներ կատարել իր այցելելիք վայրերուն մասին, որպէսզի չբաւարարուի ճաշերով եւ սելֆիական լուսանկարներով, ճանչնայ՝ մարդիկ, քաղաքակրթութիւն եւ աշխարհներ:

Ուսուցիչը, հաղորդակցական զանգուածային միջոցները, հանդիսութիւնները հաւասարապէս կրնան օգտագործուիլ ինքնահարստացման ծառայելու կոչուած ընթերցման զարգացման: Թերեւս այդ ճամբով նաեւ մարդիկ անելի կ'ազնուանան, մակերեսայնութենէ անդին՝ խորք կը նուաճեն: Այս ալ ձեւով մը հոգիի եւ միտքի գեղեցկացման միջամտութիւն է:

Իսկ մեր ժողովուրդի պարագային, հայերէն գիր-գրականութեան ընթերցումը հարազատութիւն պահելու եւ փոխանցելու լուսաւոր ճամբայ է, որպէսզի շարունակութիւն ըլլանք եւ ոչ թէ՝ ծագումով հայ:

Կը սիրենք, այս կամ այն տարեդարձներու առիթներով, հայրենասիրական ճառեր եւ երգեր լսել (մանաւանդ): Եթէ պահ մը մտածենք, որ տարին մէկ հայերէն գիրք գնեն ու կարդալը ինքնատիպ



Եւ լուսաւոր կրկնակի յեղափոխութիւն է, մեզի եւ գրողին համար, ինչե՛ր կը փոխուին մեր կեանքին մէջ:

Արդարեւ, իւրաքանչիւր հայ եթէ տարին մէկ գիրք գնէ, գիրք հրատարակելու համար մեկենաս չենք փնտռեր, հայ գրողը կրնայ յաւակնիլ օր մը իր գրիչով ապրիլ, եւ մենք ալ կը դառնանք քաղաքակիրթ ազգ, ոչ թէ մեր մարմարներով եւ լողաւազաններով, այլ՝ մեր ապրող մշակոյթով:

Ոչ մէկ ձեռով հպարտութիւն է հայ անհատին կամ հաւաքականութեան համար քանի մը հարիւր տպաքանակով լոյս տեսած եւ նուէր տրուած գիրքը: Ընդհակառակն. նուաստացում է:

Ըսինք՝ վերականգնում, ըսինք՝ հայապահպանում, ինչպէ՞ս եւ ի՞նչ ընելու համար:

Չարցում՝ ուղղուած շարքային հայուն եւ բուրգին գագաթը գտնուելու յաւակնութիւն ունեցող արժանաւորներուն եւ անարժաններուն:

Ի հարկէ, այս տողերը պիտի կարդան կարդացողները:


Ի՞նչ ընել ընթերցումէ եւ մանաւանդ հայերէն գիր-գրականութենէ խզուածներուն համար, անոնք ըլլան հայաբարբառ թէ օտարաբարբառ: Չէ՞ք խորհիր, որ ազգապահպան եւ մշակութապահպան գործունեութեան լայն դաշտ կայ անոնց առջեւ, որոնք իրենք իրենց ազգ եւ համայնք առաջնորդելու դեր տուած են, երբեմն գործածելով ուռուցիկ առաքելութիւն բառը:

20 փետրուար 2019, Երեւան

Յօդուածներ

Զօրավար Անդրանիկի ազգանպաստ գործունէութիւնը Կարինի անկումէն ետք

Յարութիւն Իսկահատեան – ՊԱՅՔԱՐ 112



Կարինի անկումէն ետք Զօրավար Անդրանիկ բնաւ չէր յուսահատած: Սակայն ան մտահոգ էր տարագիր հայութեան եւ Հայաստանի սահմաններու վիճակով եւ դժնդակ պայմաններու տակ գործունէայ աշխատանք կը տանէր փրկելու համար հայութենէն ինչ որ կարելի էր: Թէեւ ան իր հրաժարականը ներկայացուցած էր Հայաստանի Ապահովութեան Խորհուրդի Նախագահի եւ Չինուորական հրամանատարի պաշտօններէն, սակայն միշտ ի մտի ունէր վերակազմելու զինեալ ոյժերը եւ դեմ դնելու թրքական հակահայ նենգ ծրագիրներուն: Հայոց Դիւցազնին շատ մեծ սքանչացող եւ Հայաստանի Ապահովութեան Խորհուրդի

Ժամանակաւոր Նախագահ՝ Պարոյր Լեւոնեան Նոյն մտահոգութեամբ կը տառապէր ի տարբերութիւն այլ պատասխանատուներու, որոնք հատուածական նեղ հաշիւներով տարուած՝ կ'ուզէին Զօր. Արևմտահայկի հեռացումը: Այս մասին Լեւոն Թիւթիւնճեան կ'ըսէ. «Կուսակցական կիրքերէ տարուած ու փառասէր ղեկավարներ իրենք զիրենք համոզած էին թէ Անդրանիկի համբաւը իրենք է որ ստեղծած են ոչինչէն... եւ կրնան մատի հարուածով մը զայն ջնջել»: Պարոյր Լեւոնեան կրցած էր համոզել սոյն Խորհուրդի անդամները Զօրավար Անդրանիկը կրկին հրաւիրելու, կազմելու համար Նոր զինեալ գունդ մը: Այս նպատակաւ Պարոյր Լեւոնեան Զօրավար Անդրանիկին ուղղուած 27 Մարտ 1918 թուագրեալ հրաւեր Նամակին մէջ կ'ըսէ. «Հայաստանի Ապահովութեան Խորհուրդը աչքի առաջ ունէր տեսնել ձեզ առաջաւոր դիրքերում, ձեր անձնուէր ընկերներու հետ միասին, այս կրիտիկական թուական, երբ ամբողջ հայ ժողովուրդի գոյութիւնը ահաւոր վտանգի առաջ է կանգնած»:

«Յուշեր -վաւերագրական Իրողութիւններ- Արիւնիւրի Ու Ազատագրական Պայքարի Տարիներէն» (Թէքեան Մշակութային Միութեան Հրատ., Պէյրութ, 1975) խորագրեալ յուշագիրքին հեղինակը՝ Լեւոն Թիւթիւնճեան Հայաստանի Ապահովութեան Խորհուրդի կարգադրութեամբ Նախապէս մեկնած էր Պաքու, Էջմիածին ու Երեւան եւ հաւաքագրած էր 2500 երիտասարդ Հայաստանի Արեւմտեան հատուածի բռնագաղթուածներէն ու իր հետ բերած էր Թիֆլիս Զօր. Անդրանիկի Նորակազմ բանակին մէջ ծառայելու: Անոնք կը սպասէին ճակատ մեկնելու համար տեղի ունեցող կարգադրութիւններուն:

Լեւոն Թիւթիւնճեան կ'ըսէ թէ Հայաստանի Ապահովութեան Խորհուրդի միջոցաւ բանակցութիւններ տեղի կ'ունենան անգլիական առաքելութեան հետ եւ այդ յոյսին տակ կը ծնի կարիքը Զօրավար Անդրանիկի հրամանատարութեամբ արեւմտահայերէ բաղկացած Նոր



զօրագունդի մը ստեղծման որպէսզի Պարսկաստան մտնէ դաշնակիցներու կողքին հայոց շահերը պաշտպանելով պայթարը շարունակելու համար մինչեւ յաղթանակ:

Զօրավար Անդրանիկ հիմնականօրէն մտահոգ էր Կարսի եւ Վանի պաշտպանութեան հարցով: Ան գիտէր թէ կարելի էր Կարսը պաշտպանել հոն կայք դրած հայկական զօրագունդով, իսկ Վանի պաշտպանութիւնը դժուար հարց մըն էր եւ կ'ուզէր վասպուրականցիները ողջ առողջ առաջնորդել ապահով վայրեր: Դէպի Պարսկահայք ճամբուն վրայ Զօր. Անդրանիկ Ալեքսանդրապոլի մէջ հանդիպումներ կ'ունենայ զինուորական եւ ազգային ղեկավարներու հետ: Ան կը հեռագրէ Վան եւ կը յորդորէ այնտեղի պատասխանատուները նահանջելու որովհետեւ քաջ գիտէր թէ հայոց դիմադրութեան միջոցները շատ պակաս էին եւ նահանջելով միայն կրնային 20 հազար հայերու կեանքը փրկել: Կարսը պաշտպանելու կոչուած պատասխանատուները իրենց զինուորներով չեն ուզէր կռուիլ եւ կ'ուզէն նահանջել: Չանոնք համոզելու եւ դիմադրութեան մղելու Զօրավար Անդրանիկի ջանքերը ի զուր կ'անցնին: Յոն դաւադրութիւն մը տեղի կ'ունենար (տե՛ս Գեորգ Եազըճեանի հեղինակած «Կարսի 1920թ. Անկման Խորքային Պատճառները», Ա. հրատարակութիւն, Երեւան, 2007, 111 էջ, Բ. հրատարակութիւն, Երեւան, 2009, 115 էջ):

Թիֆլիսէն Վահան Թոթովէնց եւ Լեւոն Թիւթիւնճեան Յայաստանի Ապահովութեան Խորհուրդին կողմէ Ալեքսանդրապոլ կու գան եւ Առաջնորդարանին մէջ Զօր. Անդրանիկի հետ ժողով կը գումարեն: Այդ օրերուն զօրավարը տխուր ու ընկճուած էր: Լաւ գիտէր թէ այդ գայթակղալի պայմաններուն մէջ կարելի չէր դասալքութեան առաջքը առնել: Ինչպէս նախպէս Կարինի մէջ, այժմ Կարսի մէջ հսկայ քանակութեամբ կողոպտուած զէնքի եւ զինուորական պաշարի վաճառման դէպքերը բազմաթիւ էին: Ասոնց կը բարդուին նաեւ Թիֆլիս արսենալի (զինարան) վրայ գիշերային յարձակումներու եւ կողոպուտի պարագաներ: Կովկասի մէջ զէնքի առետուորը առասպելական համեմատութիւններու հասած էր: Նախապէս թուրքերն ու թաթարները դրամով կը գնէին իրենց զէնքերը: Սակայն անոնք Գանձակի ճամբուն վրայ տուն վերադարձող 20 հազար ռուս զինուորները զինաթափ ընելով եւ կողոպտելով տիրացան հսկայ քանակութեամբ զինամթերքի: Աւելորդ է ըսել թէ այս զէնքերը սկսան հայոց դէմ գործածուիլ 1918 ճակատագրական տարուան ընթացքին: Լեւոն Թիւթիւնճեան կ'ըսէ թէ Կովկասի հայոց տխուր պատկերը ծանօթ էր Զօր. Անդրանիկին եւ կ'աւելցնէ. «Այդ կացութեան մէջ վերահաս դժբախտութիւնը բացայայտ ըլլալուն էր որ Անդրանիկ վճռեց դուրս ելլել այդ ճահիճէն եւ շարունակել պայթարը տարբեր պայմաններու մէջ»: Պարսկահայքի հայ բնակչութիւնն ու գաղթականները պաշտպանելու ծրագիրը Զօր. Անդրանիկ իրեն համար սեւեռուն ծրագիր մը դարձուցած էր: Թուրք ասկեարին պիղծ ոտքը Պարսկահայքի հողին վրայ կոխած էր եւ հայուն համար սպառնալիք դարձած: Ամէն գնով պէտք էր պայթարիլ նոր իրադրութեան դէմ եւ յաղթական դուրս գալ: Այս էր Զօրավար Անդրանիկի հաստատ որոշումը:

Ալեքսանդրապոլի Առաջնորդարանի շէնքին մէջ 1918-ի Ապրիլ ամսուան գիշերային զոռոյցի մը ընացքին Զօրավար Անդրանիկ Յայաստանի Ապահովութեան Խորհուրդի առժամեայ նախագահ Պարոյր Լեւոնեանի ուղղելով խօսքը, ուրիշ հայ պատասխանատուներու ներկայութեան կը գուշակէ Կարսի մօտալուտ անկումը օրուան տուեալներէն դատելով եւ կ'ըսէ. «Կարսը երեք շաբթուան կեանք ունի: Կարսը այնպէս մը պիտի յանձնէք, որ մէկ փամփուշտ, պարկ մը ալիւր, տուփ մը շաքար, նոյնիսկ պատառ մը հաց պիտի չկարենաք դուրս հանել... Կրկնեցէք որ խենթ եմ, եթէ ձեր աչքերը կոյր են տեսնելու համար թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ ձեր շուրջը, այն ատեն ապուշներ էք... Կարսը ձեռքէ պիտի ելլէ երեք շաբթուէ... Եթէ ըսածս չընէք, ժողովուրդը անօթութենէ եւ թշնամիին սուրէն պիտի կոտորուի... Ահա թէ ի՞նչ



կ'ըսէ ձեզի խենթը...»: Չօրավար Անդրանիկ լաւ սերտած էր կացութիւնը եւ ճիշդ ըմբռնած՝ հակահայ դաւադրութեան տարողութիւնը: Լեւոն Թիւթիւնճեան իր յուշագիրքին էջ 359-ի մէջ կ'ըսէ. «Եւ Կարսը, Անդրանիկի մարգարեացման ձեւով, այդ յիշատակելի գիշերէն երեք-չորս շաբաթ ետք յանձնուեցա՛ւ թշնամիին: Երբ թուրքերը մտան Կարս, մթերանոցները հապճեպով բացուած եւ պաշարը դուրս թափուած էր, որովհետեւ փոխադրելու ժամանակ չկար, Կարսի փողոցները ճերմկած էին թափուած ալիւրի եւ շաքարի խաւէն»:

Չօր. Անդրանիկի նախքան Պարսկահայք ուղեւորուիլը, անոր հետ եղող սպաներն ու բարձրաստիճան գինուորները Ալեքսանդրապոլի մէջ իրեն թիկունք կը կնազնէին: Այս մասին Լեւոն Թիւթիւնճեան կ'ըսէ. «Անոնք հաւատարիմ ու քաջ զօրականներ էին, հոգիով նուիրուած իրենց դիւցազունին եւ հայ ժողովուրդին: Այս օրհասական օրերուն, անոնք բացարձակ նուիրումով ու վստահութեամբ մէկ նպատակ կը հետապնդէին, մեկ մտածում ունէին միայն: Անդրանիկ էր որ զիրենք կ'առաջնորդէր թշնամիին դէմ գերագոյն պայքարի եւ անոնք պիտի կռուէին մինչեւ իրենց վերջին շունչը: Այդ բոլոր յուսահատութիւններուն եւ դժիւմ հեռանկարներուն դէմ, ցցուն կը մնար հայու հոգին, անոր ապրելու եւ գոյատեւելու կամքը՝ խորհրդանշուած Անդրանիկի մէջ»: Հայ ժողովուրդի վերապրելու եւ գոյատեւելու ստեղծագործ կամքին զօրութեամբ, «հայու հոգին անմահ կը մնայ հոգ չէ թէ մարդ արարածը մահկանացու է», կ'աւելցնէ Թիւթիւնճեան:

Չօրավար Անդրանիկի օրերէն մինչեւ օրս հայ ազգին մէջ գտնուած են եւ կան պատասխանատու դիրքերու վրայ եղող մարդիկ որոնք բնաւ ազգային գիտակցութիւն եւ նախանձախնդրութեան զգացում չեն ունեցած: Անոնք իրենց կեանքը կը վարեն իբրեւ անհատներ կամ անձնական ու հատուածական շահեր հետապնդող հաւաքականութիւններու պետեր: Այսպիսիներ միշտ խուսափած են պարտականութենէ եւ գործէ, նախընտրելով յարատեւ հանգիստն ու վայելքը: Անոնք միշտ դէմ եղած են ազգային ազատագրական պայքարին եւ դիմած են շողոքորթութեան, քծնանքի ու դատարկապորտութեան միջոցներով իրենց գարշելի գոյութիւնը տաքուկ անկիւններու մէջ պահելու: Այսպիսիներ չեն զլացած նաեւ պատեհապաշտաբար ուրիշներու գործը իւրեցնելու եւ զայն իրենց հեղինակութիւնը ներկայացնելու սին պարծանքով սոնքալու: Ահաւասիկ այս է պատճառը որ Չօրավար Անդրանիկ իր հոգին չաւանդած բացազանչեց՝ «Գործս կ'ես մնաց...»: Դժբախտաբար անոր կ'ես մնացած գործը շարունակող չգտնուեցաւ, իսկ հակազգային ղեկավար կոչուած հայեր արգելք եղան այդ գործը շարունակելու զորդներու գործունէութեան, ինչպէս արգելք եղած էին Չօրավար Անդրանիկի գործունէութեան եւ փորձած էին իւրացնել տասնամեակներու վրայ երկարող անոր ազգային նուիրեալ գործին արգասիքը: Պարագան նոյնն է երէկ եւ այսօր: Սակայն այսօր այժմեական հարցը այն է թէ ո՞վ պիտի շարունակէ Չօրավար Անդրանիկի կիսատ մնացած գործը...:

Տեսակէտ

ՖՐԱՆՉԻՍԿՈՍ Ա. ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՀՈԳԵՒՈՐ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ



Տիեզերական հոգեւոր յեղափոխական Ֆրանչիսկոս Ա. լուռ ու մուկ, երկար շունչով եւ աննկուն յարատեւութեամբ կը շարունակէ իր հոգեւոր յեղափոխութեան առաքելութիւնը, զօրաշարժի ենթարկելով մարդկութիւնը ընդդէմ՝ անմարդկայնացած աշխարհակարգին, զոր ստեղծած է Նոր-ազատական, վայրի դրամատիրութիւնը՝ իր անհատապաշտութեամբ, դրամապաշտութեամբ եւ մարդատեսացութեամբ:

Նախորդ մեր գրութիւններով անդրադարձած ենք Ֆրանչիսկոս Ա. Պապի հետապնդած հոգեւոր զարթօնքի շարք մը յեղափոխական պատգամներուն, ինչպէս՝ Նոր-ազատական վայրի դրամատիրութեան արդիական ստրկատիրութիւն անուանումը, տեղբայրոջ աստուածաբանութեան փոխարէն Նոր՝ դէպի Աստուծոյ խօսքերը ուղեւորուող ու ճամբայ ելած աստուածաբանութեան մը պահանջը, սիրոյ եւ քնքշութեան յեղափոխութեան մը հրամայականը, տարբեր եկեղեցիներու եւ Վատիկանի միջեւ պատմական հաշտութիւնները (Ռուս Ուղղափառ, Յոյն Ուղղափառ, Լուտերական, Եւայլն):

Ներկայ գրութեամբ պիտի անդրադառնանք երեք Նոր յեղափոխական քայլերու՝ Վատիկանի եւ Ժողովրդային Չինաստանի պետութեան միջեւ հաշտութիւնը, Վատիկանի եւ իսլամական Ալ-Ազհարի միջեւ հաշտութիւնը, եւ՝ սրբութեան Նոր, յեղափոխական սահմանում մը, մեկնաբանութիւն մը կամ ընկալում մը, որ ունի տիեզերական տարողականութիւն, փոշիացնելով «բացառիկ»ի, «ընտրեալ»ի, «մենաշնորհեալ»ի եւ մարդոց միջեւ ամէն նմանատիպ խտրականութիւն:

Ա. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՎԱՏԻԿԱՆԻ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԸՆԴՄԵՁ

22 Սեպտեմբեր 2018 թուին, Փեքինի մէջ կը կնքուի «Ժամանակաւոր համաձայնագիր՝ Վատիկանի եւ Ժողովրդային Չինաստանի միջեւ», որ հաշտութիւն կ'իրականացնէ երկու կողմերուն միջեւ ու կը կառավարէ անոնց փոխ-յարաբերութիւնները՝ եկեղեցի-պետութիւն յարաբերութեանց ծիրին մէջ:

Այս համաձայնագրին յանգող բանակցութիւնները սկսած էին 2004 թուին՝ Պենտիկտոս ԺԶ. Պապին օրով, եւ կը դանդաղէին յամր գնացքով: Ֆրանչիսկոս Ա. արագացուց այդ գնացքը, քանի որ Ժողովրդային Չինաստանի կարմիր պետութեան հետ սկսաւ խօսիլ Ազատագրութեան Աստուածաբանութեան արժեհամակարգին բառապաշարով, որ համահունչ էր Կարմիր Չինաստանի արժեհամակարգին բառապաշարին հետ...: Վատիկան այսօր այլեւս չի խօսիր իր հին դպրական աստուածաբանութեան եզրերով, այլ՝ Ազատագրութեան Աստուածաբանութեան ընկերային արդարութեան, մարդասիրութեան եւ Ժողովուրդներու եղբայրակցութեան եզրերով:

Երեսնամեակ մը առաջ, ամերիկեան CNN կայանը հարցազրոյց մը ունեցած էր Ֆիտել Քասթրոյի հետ: Այն հարցումին, թե՛ Քուպայի Յեղափոխութիւնը եւ Կոմկուսը ի՞նչ դիրք ունն եկեղեցիին հանդէպ, Քասթրո ըսած էր. «Յեղափոխութիւնը եւ կուսակցութիւնը եկեղեցիին դէմ չեն, որպէս եկեղեցի: Այլ կը զատորոշեն եկեղեցիները իրարմէ: Ժողովուրդին եւ Յեղափոխութեան հետ



կանգնող եկեղեցին ազատ է: Բայց, ժողովուրդին ու Յեղափոխութեան դէմ կանգնող եւ Բուրժուազիային ծառայող եկեղեցին կը հալածենք: Մեր երկրին մէջ, Կաթոլիկ եկեղեցին ազատ չէ, քանի որ ժողովուրդին եւ Յեղափոխութեան դէմ է՝ Բուրժուազիային կը ծառայէ: Եւ արդէն գոյութիւն ունի միայն երկրի մեծ քաղաքներուն մէջ – բացակայ է գիւղերէն: Իսկ Աւետարանական եկեղեցին ազատ է, քանի որ ժողովուրդին ու Յեղափոխութեան դէմ չէ, այլ ժողովուրդին հետ է եւ ժողովարաններ ունի երկրին ամենափոքր գիւղին մէջ անգամ»:

Հոս հարկ է յիշել, թէ՛ պատմութեան երկայնքին, ընդհանրապէս, որպէս կանոն, եկեղեցիի մը Եւթապլիշմէնթը զինակցած է տիրող աւատատիրական եւ դրամատիրական դասակարգին հետ, եւ նոյնիսկ՝ բարձրաստիճան եկեղեցականներ անձնապէս ալ եկած են մեծ աւատատէրներ եւ դրամատէրներ: Ուրեմն, շատ բնական է, որ այդպիսի երկիրներու մէջ, երբ սոցիալիստական յեղափոխութիւն կը յաղթանակէ՝ այդ Եւթապլիշմէնթի պատասխանատուները հալածուին:

Ժողովրդային Չինաստանի Կոմկուսի բարեկամական վերաբերմունքը Ֆրանչիսկոս Ա.ի հանդէպ միակողմանի չէ, այլ՝ երկկողմանի: Եւ շատ բնական է, որ Պապը եւս բարեկամական եւ նոյնիսկ զուսպ ու շրջահայեաց համակրական վերաբերմունք ունենայ Կարմիր Չինաստանի հանդէպ:

Վատիկանի պաշտօնաթերթին 28 Սեպտեմբեր 2018 թուակիր անգլիատառ համարին մէջ, Չինաստանի հետ Վատիկանի կնքած համաձայնագրին առիթով, Ֆրանչիսկոս Ա.ի կողմէ Չինաստանի կաթոլիկներուն ուղղուած ուղերձին ամփոփումը կատարուած է: Այդ ամփոփագրին հետեւեալ պարբերութիւնները ցոյց կու տան Ֆրանչիսկոս Ա.ի մօտեցումը ժողովրդային Չինաստանի: Կը մեջբերենք.

«Գալով իմ անձնական կարծիքին, ես միշտ ալ Չինաստանը պատկերացուցած եմ որպէս մեծ հեռանկարներու երկիր, իսկ չին ժողովուրդը՝ որպէս մշակոյթի եւ իմաստութեան անգնահատելի ժառանգութեան մը ստեղծողները, որոնք յղկուած են՝ հակառակութեանց դիմադրելու եւ այլազանութիւնները հիւրընկալելու յատկութեամբ, եւ որոնք՝ ոչ պատահականօրէն, վաղ ժամանակներէ ծանօթացած են եւ շփման մէջ մտած քրիստոնէական այն պատգամին հետ, որ կ'ըսէ՝ վստահիր բարեկամութեան»:

Համաձայնագրի հեռանկարներուն մասին.

«Թէեւ ժամանակաւոր համաձայնագիրը կնքուած է միայն եկեղեցւոյ կեանքը կառավարելու հարցերուն շուրջ, սակայն այս մէկը առաջին անգամ ըլլալով է որ յոյս կը ներշնչէ, թէ՛ կրնայ լաւ զարգանալ, բարելաւուիլ, համագործակցութեան աւելի լայն ծիրի մը մէջ, որուն նախադրեալները կը տեսնեմ արդէն չին իշխանութիւններուն մօտ»:

Եւ՝ չին կաթոլիկները միւս երկիրներու կաթոլիկներուն որպէս օրինակելի տիպար ներկայացնելով, ըսած է.

«Աշխարհի տարբեր երկիրներու մէջ գտնուող կաթոլիկ տեղական համայնքներուն կը թելադրեմ, որ փորձեն անպայման ծանօթանալ եւ գնահատական տալ չին կաթոլիկներու յատուկ հոգեւոր ու մշակութային գանձերուն, եւ՝ համարկուիլ անոնց հետ: Այսօր՝ ժամանակը եկած է միասնաբար ճաշակելու Աւետարանի հարազատ միրգերը, որոնց սերմերը ցանուած էին հին Չինաստանի «Միջին Թագաւորութեան» մէջ, եւ՝ միասին մեր Տէր Յիսուսին ուղղելու գոհաբանական շարական մը, որ հարստացած ըլլայ անպայման չինական շեշտերով»:



Եւ, վերջապէս, ուղղելով իր խօսքը ժողովրդային Չինաստանի պետական ու կուսակցական առաջնորդներուն.

«Կը վերանորոգեմ իմ հրաւերս՝ վստահութեամբ, քաջաբար եւ հեռատեսութեամբ շարունակելու սկսուած այս երկխօսութիւնը, անոնց վստահեցնելով, թէ՛ Ս. Աթոռը անկեղծօրէն պիտի շարունակէ ջանալ՝ ընդարձակելու համար ճշմարիտ բարեկամութիւնը չին ժողովուրդին հետ, ծանօթ եղած ըլլալով այս ժողովուրդի անցեալի պատմութեան եւ ներկայ քաղաքակրթութեան, զորս չէ մոռցած, մանաւանդ՝ երբ ժողովուրդներու եղբայրակցութիւնն ու համաշխարհային խաղաղութիւնը մեր հասարակաց կէտ նպատակակետերն են»:

Չինաստանի մէջ Կաթոլիկ Եկեղեցի հիմնած են՝ իտալացի քարոզիչ Matteo Ricci եւ չին քարոզիչ Xu Guangqi (Խու Կուանկքի) 1960 թուականին:

Վատիկանի հետ Չինաստանի յարաբերութիւնները անցած են վերիվայրումներէ եւ մեծ ցնցումներէ, մինչեւ անգամ ժողովրդային Չինաստանի «Մշակութային Յեղափոխութեան» շրջանին, իշխանութիւնները պահանջած են կաթոլիկներէն ամբողջովին խզուիլ Վատիկանէն ու դառնալ հերձուած եկեղեցի: Ֆրանչիսկոսի ազատագրական արժեհամակարգը ըլլալով նմանակը Կարմիր Չինաստանին, վերականգնուեցաւ բարեկամութիւնը նոր Վատիկանի հետ...:

Բ. ՎԱՏԻԿԱՆ — ԱԼ-ԱԶՅԱՐ ՈՂՁԱԳՈՒՐՈՒՄ

Յեղափոխական հոգեւոր, ԶԱՇՏԱՐԱՐ ԱՌԱՋՆՈՐԴ Ֆրանչիսկոս Ա., ոչ միայն նախ հաշտեցուց քրիստոնեայ եկեղեցիները, այլեւ ապա՝ հաշտեցուց Վատիկանը իսլամ Ալ-Ազհարին հետ:

Ալ-Ազհարի Շէյխը պաշտօնապէս յայտարարեց. «Քրիստոնեաները այս երկիրներու "փոքրամասնութիւնները" չեն, այլ բնիկ ժողովուրդին անբաժանելի մասը»...:

Ապու Տապիի մէջ Ալ-Ազհարի Շէյխին հետ իր ողջագուրումով եւ իր մատուցած պատմական առաջին պատարագով՝ 350 հազար բազմակրօն հաւատացեալներու եւ այլազգի հոգեւոր պետերու ներկայութեան, ոչ միայն Միջին Արեւելքի մէջ վերականգնեց քրիստոնեայ եկեղեցիներու խալիլի սկսած հիմքերը, այլեւ՝ նշանակալից յաղթանակ մը արձանագրեց Արեւմուտքի իմփերիալիստներու՝ ԱՄՆ-ի գլխաւորութեամբ եւ գործակցութեամբը Սիոնական պետութեան, Փանթուրք պետութեան, Իսրուան Մուսլիմներուն եւ Ուսհապիստ Սեուտական Արաբիոյ հրահրած կրօնական մոլեռանդութեան պատերազմին դէմ, որուն նպատակն էր Միջին Արեւելքը պարպել քրիստոնեաներէն՝ ջարդելով զանոնք, կամ՝ անոնց արտագաղթով:

Այս ծրագիրը հետեւողական կերպով գործադրուած էր 2003 թուականէն, սկսելով Իրաքի դէմ ամերիկեան ներխուժումէն եւ շարունակուելով՝ Սուրիոյ դէմ 2011-ին շղթայազերծուած իմփերիալիստական համաշխարհային պատերազմին ընթացքին: Ամերիկեան իմփերիալիզմի վարձկան գրիչ Սամուէլ Զանթինկընի «Քաղաքակրթութիւններու Պատերազմ» հատորին հետապնդած նպատակը այս էր, որուն համար ալ պատրաստուած էր «Իրաքի եւ Սուրիոյ Իսլամական Պետութիւն» կոչուող ահաբեկչական վարձկան բանակը:

Գ. ՍՐԲՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԱՐԺԵՉԱՓԸ



Նոր-ազատական վայրի դրամատիքութեան ստեղծած «Յամաշխարհայնացում»ը, զոր Ֆրանչիսկոս Ա. կը կոչէ «արդիական ստրկատիրական հասարակարգ»... մեծապէս անմարդկայնացուց աշխարհը: Այս Մեծ Չարիքը համատարած է եւ երրորդ հազարամեակի մարդը կարիքը ունի Նոր աստուածաբանութեան մը, որ ամէն մարդու մէջ արթնցնէ սրբութիւնը, որպէսզի՝ ամէն մարդ մասնակից դառնայ այս Չարիքին դէմ մղուելիք պայքարին: Որովհետեւ սրբութիւնը սահմանափակուած չէ որոշ դասի կամ մարզի մարդոց, եւ մենաշնորհը չէ կղերականին, ջերմեռանդ հաւատացեալին, յարատեւ աղօթողին կամ մանաւանդ՝ մենակեաց աղօթողին, քանի որ սուրբ գործը չի կրնար կատարուիլ առանձին՝ առանց ուրիշին:

Այս մասին Ֆրանչիսկոս Ա. երկասիրած է «թուղթ» մը՝ "Gaudete et Exsultate" վերնագրով, որուն ամբողջական բնագիրը կը գտնուի www.vatican.va կայքէջին վրայ, իսկ ամփոփումը կատարած է Զոռմի Մոնսէնիէօր Անժելօ Տը Տօնաթիս, Վատիկանի պաշտօնաթերթի 12 Ապրիլ 2018 թուակիր համարի (թիւ 15) ֆրանսատառ շաբաթական յաւելուածին մէջ, "Pour quoi parler de sainteté?" վերնագրին տակ:

Յիշեալ Չարիքին դէմ մարդոց սրբութեան պայքարը չի սահմանափակուիր որոշ բարի պարագայական արարքներու մէջ, այլ՝ կը պահանջուի սրբավայել կենցաղ, ամենօրեայ վարք ու բարք:

Պապը գրած է. «Սրբութիւնը ճշմարիտ կեանքն է՝ երջանկութիւնը, որուն համար մենք ստեղծուած ենք: Սրբութեան հակառակը անշուշտ մեղքերով լի կեանքը չէ, այլ այն մէկն է, երբ մենք կը գոհանանք միջակութիւններով եւ բովանդակագուրկ կեանքով, եւ՝ Աստուծոյ մեզի պարգեւած սերը չենք վերաբաշխեր մեր եղբայր մարդոց ու հասարակութեան»:

Այլ տեղ մը կը գրէ. «Սրբութիւնը Ս. Զոգիին մեզի պարգեւած պտուղն է՝ մեր առօրեայ կեանքին մէջ, մարդոց հետ սիրով ապրելու: Սիրով ապրելու համար մասնաւոր պայմաններ կամ գործելակերպեր չեն պահանջուիր: Չի պահանջուիր շատ ժամանակ յատկացնել աղօթելու կամ աստուածաբանութիւնը ուսումնասիրել կամ եկեղեցիին մէջ պաշտօնատարութիւն ունենալ: Այլ, պարզապէս, Աստուծոյ մեզի պարգեւած Նոր ապրելակերպն է, որ շօշափելիօրէն կարելի է ունենալ մեր ասպարէզին մէջ: Օրինակ՝ ծնողք, որոնք մեծ սիրով իրենց զաւակները կը կրթեն: Այն այրերն ու կիները, որոնք ընտանիքին հացը ապահովելու համար քրտնաջան կ'աշխատին: Այն հիւանդներն ու տարիքաւոր կրօնականները, որոնք տակաւին չեն մոռցած եւ դեռ ատակ են ժպտալու...»:

Պապը մասնաւորաբար կը շեշտէ հետեւեալը. «Սրբութիւնը անկարելի է՝ առանձինն, մենակեաց կերպով: Անհատապաշտութիւնն ու ինքնիրմով բաւականանալու յաւակնութիւնը ճշմարիտ կեանքի չեն առաջնորդեր, ըսել է՝ սրբութեան չեն առաջնորդեր: Մենք ուրիշներուն կարիքը ունինք, մենք պետքը ունինք զգալու թէ մեր կեանքը միախառնուած է Աստուծոյ ստեղծած ժողովուրդներու կեանքին: Պատմութիւնը չէ արձանագրած անհատական հերոսութեան սրբութեան պարագայ մը, միայնակ անձի մը հերոսութիւնը՝ առանց հաւաքականութեան մը նեցուկին»:

Տակաւին, յեղափոխական Ֆրանչիսկոս Ա. կը շեշտէ Նաեւ քրիստոնէական սրբութեան յանձնառութիւնը՝ մարդկութեան պատմութեան եւ անոր զարգացումին, բարելաւումին ու յառաջդիմութեան հանդէպ, ըսելով. «Քրիստոնէական սրբութիւնը բնաւ չէ մերժած յանձնառութիւնը մարդկութեան պատմութեան եւ անոր յառաջդիմութեան հանդէպ Ընդհակառակը, ան սուրբերը նկատած է "վտանգաւոր" յեղափոխականներ, քանի որ անոնք



վճռած կ'ըլլան ռիսքեր առնել իրենց առաքելութեան իրականացումին համար, զոր իրենց վստահած է մեր Հայր Աստուածը: Հոն գոյութիւն չունի քրիստոնէական սրբութիւն, ուր հոգեւորականութիւնը կը խզուի մարդկութեան պատմութենէն եւ զայն բարելաւելու՝ դէպի լաւը փոխակերպելու առաջադրանքէն»:

Այսպիսով, Ֆրանչիսկոս Ա.ի յեղափոխութիւնը ուղղուած է Վատիկանի հին, դպրական, ստրկամիտ աստուածաբանութեան եւ Ս. Գիրքի համարներուն տրուած հին մեկնաբանութիւններուն եւ անոնց վրայ հնարովի յաւելումներուն դէմ, որոնք նենգափոխած են Նազովրեցի Յիսուսի քարոզները, որոնց հաշտ է Ազատագրութեան Աստուածաբանութիւնը միայն:

Ան կը սրբագրէ Վատիկանի անցեալին գործած սխալները եւ կը դարմանէ անոր պատճառած վերքերը միւս եկեղեցիներուն, անոնց հետ հաշտուելու նախաձեռնութիւնը ինք առնելով: Հին Վատիկանը կ'ըսէր. "To be in communion with God, you have to pass by the Vatican": Իսկ Ֆրանչիսկոս կ'ըսէ. «Ս. Հոգին եւ սրբութիւնը ոչ ոքի մենաշնորհն է, այլ՝ անխտրաբար կ'այցելեն բոլորին՝ տարբեր ցեղի, ազգութեան, կրօնքի, ապակրօնութեան ու մշակոյթի պատկանող մարդոց»: Ուրեմն, Ֆրանչիսկոս ոչ միայն կրօններուն եւ ապակրօնականներուն հաշտարարն է, այլեւ՝ մարդկային բաղաբակրթութեան միաւորողը, երբ Ս. Հոգին կրնայ այցելած ըլլալ անխտրաբար բոլոր ժողովուրդներու մեծ բարոյագետներուն, փիլիսոփաներուն, արուեստագետներուն, մտածողներուն, գիտնականներուն եւ բոլոր հնարիչներուն, տաղանդներուն եւ հանճարներուն՝ բոլոր ժամանակներուն մէջ...:

Եւ՝ շնորհաւորելին, միայն այս յեղափոխական հաշտարարը եւ միաւորողը չէ, այլ այն 117 կարտինալներու մեծամասնութիւնը, որուն ձայներով Խորիսէ Մարիօ Պերկոլիօն դարձաւ Ֆրանչիսկոս Ա. Պապ, որովհետեւ՝ անոնք կրցած էին տեսնել ներկայի անցումային շրջանը՝ միաբեւեռ աշխարհակարգէն դէպի բազմաբեւեռ աշխարհակարգ, որուն մէջ Ֆրանչիսկոս Ա. «վտանգաւոր» յեղափոխականը, կրնար գործել ազատօրէն, իրականացնելու համար մեր Հայր Աստուծոյ իրեն վստահած առաքելութիւնը... առանց մահափորձերու:

Այսպիսով, 20-րդ դարու 60-ականներուն մշակուած Ազատագրութեան Աստուածաբանութիւնը, որ բանադրուած էր իր մայրամուտը ապրող հին, դպրական Վատիկանի Եւթապլիշմէնթէն, կ'էս դար ետք, եկաւ նստեցաւ Վատիկանի Աթոռին, ազդարարելով անոր մայրամուտին յաջորդող անխուսափելի արշալոյսը, զայն դարձնելով յառաջապահութեան փարոս, մոռցնել տալով անոր պահպանողականութեան միջնադարեան խաւարը...:

ՄԵԹՐ Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Պէյրուս

10 Փետրուար 2019

Տեսակէտ

ԱԶԳԻ ՄԸ ՈԳԻՆ ԻՐ ԼԵԶՈՒՆ Է

Գրեց՝ ՍՏԵՓԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ



Die Sprache eines Volkes ist seine Seele. ազգի մը լեզուն իր ոգին է. l'âme d'un peuple est sa langue: Գերմաներէն այդ ասոյթը լաւագոյնս կը բնորոշէ լեզուին տեղն ու դերը ազգային հաւաքականութեան մը մէջ: Վերցնենք լեզուն եւ այդ հաւաքականութենէն շատ բան չի մնար: Տարիներու, տասնամեակներու թաւալումէն եթէ մարդոցմէ շատ բան կը մոռցուի, Սիլվա Կապուտիկեան տակաւին երկար պիտի յիշուի միայն իր այս երկու տողերով.-

«Ու տես որդիս, ուր էլ լինես,

այս լուսնի տակ ուր էլ գնաս,

Թէ մօրդ անգամ մտքից հանես,

քո Մայր լեզուն չմոռանա՛ս»:

Մեր երկրի աշխարհագրական դիրքին պատճառով, թէ մեր ցաւոտ պատմութեան հետեւանքով, Հայը միշտ բազմալեզու եղած է: 16 դար առաջ մեր թարգմանիչները սքանչելի տիրապետեր են ասորերէնին, յունարէնին, լատիներէնին ու պարսկերէնին եւ մեզի պարզեւեր են Հայերէն Աստուածաշունչը, ԹԱԳՈՒՀԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՑը: Այսօր ալ չկայ Հայ մը, որ չտիրապետէ երկու, երեք օտար լեզուներու: – «Օտարինը մի՛ ատիր, բայց քո Հայինը վեր դասէ ամենքէն» գրեր է ԺԹ. դարու կէսերուն մեր մեծ բանաստեղծներէն Գամառ-Քաթիպան (Ռափայէլ Պատկանեան): Ու մենք կ'ուրախանանք, որ մեր նախագահը, վարչապետը, սա ինչ օտար լեզուն մայրենիի չափ սահուն կը խօսին, երբ պաշտօնական այցով կ'երթան արտասահման:

Անցեալ տարուան հայաստանեան վերիվայրումներէն ի վեր, շատոնց ազատ կարծիք իմ անկիւնէս մակագրութեամբ (rubrique) բան չէի գրած. ներկային տուն տուողը թերթիս 1306 թիւի Ա. Էջին՝ պրն Ժիրայր Չոլաքեանի խմբագրականն է Հ.Բ.Ը.Մ.-ի 90-րդ Ընդհանուր Ժողովին վերաբերեալ: Աւելի ճիշդ անոր այն պարբերութիւնը ուր գրուած է. «Բացառիկ երեւոյթ էր



Յ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական վարչութեան անդամի հանգամանքով Յայաստանի Նախագահ Արմէն Սարգսեանի ներկայութիւնը...»: Անկեղծօրէն ուրախացայ որ՝ այդ 113-ամեայ պատկառելի կազմակերպութեան տարեգրութեանց մէջ առաջին անգամ ըլլալով՝ ՀՀ Նախագահ մը մաս կը կազմէ անոր Կեդրոնական վարչութեան: Բայց հազիւ հինգ երկվայրկեան յետոյ, ուրախութիւնս խոր տխրութեան, հիասթափութեան փոխուեցաւ երբ իրագեկ եղայ, որ այդ ժողովը անգլերէնով ընթացած է եւ ՀՀ Նախագահն ալ փոխանակ հոսանքն ի վեր թիավարելու, ինք ալ Շէյքսփիրի լեզուով խօսած, արտայայտուած է...: Եւ այս՝ ժողովի մը մէջ ուր մասնակիցներու մեծամասնութիւն մը միջինարեւելեցիներ են, այսինքն Յայ դպրոցի մէջ թրծուած մարդիկ...: Եւ իսկոյն մտածեցի որ ի տես այդ երեւոյթին, ոչ միայն Պօղոս Նուպար փաշային եւ իր հիմնադիր ընկերներուն, այլեւ դպրոցաշէն մեծանուն Նախագահ Ալեք Մանուկեանին աճիւնները կլոր-կլոր դարձած են իրենց գերեզմաններուն մէջ..., քանի որ այդ պատկառելի հաստատութիւնը տասնամեակներ ամբողջ Նախախնամութեան դեր կատարեց հայրենակորոյս Յայութեան մէջ: Ինք, Ալեք Մանուկեան, երիտասարդ աղքատ գաղթական, շաբթուան վեց օրը չարաչար աշխատանքէ վերջ, Կիրակի առտուն եկեղեցի կ'երթար որպէս դպիր, սարկաւազ ծառայելու եւ կէսօրէ ետք ալ փոխանակ հանգստանալու, անուս անգրագետ գաղթականներուն հայերէն կարդալ-գրել կը սորվեցներ, ԱՅՍ ԱՐԴԻԲՆՔԻՆ ՀԱՄԱՐ: Այդ եռօրեայ հաւաքին մէջ, ուր կերուխումը, աշխարհային (mondain) միջոցառումներն ալ անպակաս եղեր են, վայրկեան մ'իսկ խօսուեցա՞ւ արդեօք Կիպրոսի Մելգոնեան կրթական (հանգուցեայ) հաստատութեան համալիրին մասին: Եւ եթէ խօսուեցաւ, միայն ամերիկացի պիզնեսմէնի՞ աչքերով թէ՛ քանի՞ միլիոն տալլըր կ'արժէ ան եւ թէ քիչ մըն ալ սպասելով քանի՞ միլիոն տալլըր աւելիով կարելի է վաճառել: Կստահաբար վերոյիշեալ մեծանուն դէմքերուն հետ, արդէն 12 տարիէ ի վեր անհանգիստ Մելգոնեան եղբայրներու աճիւններն ալ խլրտեցան իրենց գերեզմաններուն մէջ: Այդ անուս, իրենց մականունը ճիշդ՝ Մելքոնեան գրել չգիտցող ամուրի եղբայրները, ամբողջ կեանք մը դրուշ-դրուշ հաւաքած իրենց դրամով ազգին պարգեւեցին կրթական, հոգեւոր այնպիսի օճախ մը, որ 70 տարի ամբողջ երեք սերունդ մտաւորական, խմբագիր, ուսուցիչ ու այլ մշակներ հասցնելով, լուսաւոր պահեց Սփիւռքի ջահը: Եւ դեռ կրնար երկար ատեն պահել: Եթէ հայութենէ պարպուած պիզնեսմէններ չմարեին բոցը...: Փակ շինութիւն մը Նոյնքան –եթէ ոչ աւելի– ինամքի (entretien) կը կարօտի որքան՝ բաց, գործող շէնք մը: Ըսուեցա՞ւ, խօսուեցա՞ւ թէ անցնող 12 տարիներու ընթացքին այդ ուղղութեամբ քանի՞ ծախսուեցաւ...: Բարեգործականը որ այլեւ Սփիւռքի մէջ դպրոց կը փակէ, կը ծախէ, իր ամբողջ ներուժը կեդրոնացուցած է եղեր Յայաստանի վրայ, որ վիհ մըն է (un gouffre) անյատակ Դանայեան տակառ մը, որ որքան ջանաս լեցնել՝ իսկոյն կ'անհետանայ, ի մէջ այլոց կ'օժանդակէ կամ կը պահէ եղեր այսպէս կոչուած Ամերիկեան համալսարան մը, որու շփացած, անկլեամերիկեան զգեստներով եւ քառակուսի գլխարկներով ուսանողութիւնը կը մտածէ արտագաղթել իր տիփլումն ստացած պահուն իսկ, որովհետեւ Արեւմուտքի մէջ շատ աւելի լաւ կը վարձատրուի...: Բարեգործականը կը մտածէ եղեր Նաեւ թուայնացման եւ այլ նորոյթներով զինել երիտասարդութիւնը: Այդ բաները շատ աւելի աժանով եւ աւելի օգտակար ազգին համար կարելի էր Մելգոնեանի մէջ ընել...: Այսպէսով, Ե՛ւ Յայութիւնը Միջին Արեւելքի մէջ կ'ունենար ամուր կռուան մը Ե՛ւ թէ Մելգոնեան կրթական հաստատութեան վարկը աւելցած կ'ըլլար, թէ՛ նիւթապէս, թէ՛ բարոյապէս: Բայց ասոր համար ալ պէտք էր լաւ գիտակցիլ վերոյիշեալ գերմաներէն ասոյթին իմաստին: Ջանանք մոռնալ ուրեմն եղած նիւթա-բարոյական ահաւոր կորուստը եւ երթանք Յայաստան, ուր Յ.Բ.Ը. Միութիւնը կ'ուզէ ծաւալել իր ապագայ գործունեութիւնը:

Երբ ասկէ 40-50 տարի առաջ նիւթական մեծ զոհողութիւններով, շրջանակուած, կազմակերպուած ճամբորդութիւններով Մայր-հայրենիք կ'այցելէինք, հազիւ քիչ մը եղունգով



կարմիր ջնարակը մարդոց վրայէն բերած, դուրս կու գար ՅԱՅը՝ իր հողին կապուած, նիստ ու կացով, աւանդութիւններով, սովորութիւններով՝ ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ՅԱՅը: 50 տարուան մէջ կարմիր իշխանութիւնը չէր յաջողած կերտել homo sovieticus-ը: Իսկ հիմա՞: Հայաստանցին պէտք չունի ո՛չ ամերիկեան համալսարանի, ո՛չ ալ արտագաղթելու՝ համաշխարհային քաղաքացի դառնալու համար: Հոն արագօրէն ներթափանցած եւրոպական, արեւմտեան արժէքներու (???) հայելին է ազատութեան խորհրդանիշ (???) հեռատեսիլը, որու հինգ կայաններն օրն ի բուն կը սփռեն սերիալներ (feuilletons) որոնց սցենարը (scenario) լի է ապականութեամբ եւ պղծութեամբ. խարդաւանանք, խաբէութիւն, առեւանգում, սպանութիւն, գողութիւն ու բողոքիւն, կիսամերկ եւ մագերին սիրամարգի գոյներով ներկուած կանայք, երեսին քիօ մը շպարով. տղամարդիկ՝ չածիլուած, խոժոռ ու կենկաթըրի դեմքերով... Տէ՛ր Աստուած, ի՛նչ անկում, ի՛նչ ցածութիւն: Ա՛յս է երագուած «ազատ ու անկախ» Հայաստանը, ուր կը ծածանի Եռագոյնը եւ ուր կը հնչէ «Մեր Հայրենիք»-ը:

Հայաստանի մերօրեայ վարչապետ Նիկոլ Փաշինեան կը հպարտանայ որ յաջողած է այսպէս կոչուած «թաւշեայ յեղափոխութիւն»-ը: Եւ այժմ կ'ուզէ ձեռնարկել տնտեսական յեղափոխութեան: Դուրսէն դիտելով եղելութիւնները եւ առանց խառնուելու հայաստանեան քաղաքական ներքին խոհանոցին, ըսենք՝ որ մենք ալ ուրախ եղանք որ այդ յեղաշրջումը կատարուեցաւ առանց դոյզն իսկ արիւնահեղութեան: Բայց կը կարծենք որ տնտեսական յեղափոխութեան զուգահեռ, կամ ալ անկէ առաջնահերթ, Հայաստան կարիքն ունի ոգեկան յեղափոխութեան մը: Յեղափոխութիւն մը, որ պէտք է տարուի երկու ուղղութեամբ.

ա – ապականած բարբերու մաքրութեամբ, բարոյականի վերահաստատութեամբ:

բ – Լեզուամտածողութեան մաքրութեամբ: Երկուքն ալ կը կարօտին քաջութեան ու զօրաւոր կամքի: Եթէ պրն Նիկոլ ունենայ այդ քաջութիւնն ու յաջողի այդ ոգեկան յեղափոխութիւնը, ապագան ոսկի տառերով պիտի գրէ իր անունը Հայոց պատմութեան մատենին մէջ: Առաջին մասին մէջ՝ վանել բարբերը ապականող բոլոր երեւոյթները եւ ոչ միայն տնտեսական գետնի վրայ պայթարիլ կոռուպցիայի դեմ. վճռականապէս արգիլել այդ անբարոյ սերիալները, արգիլել ոչ միայն ընտանեկան սրբութիւնները խաթարող, ԱՅԼ ԱԶԳԻՆ ԹՈՒՎՅԻՆ ԱՃԸ ԿՈՏՐՈՂ ՎԻՇՈՒՄՆԵՐԸ. (չմոռնանք որ վերջին 30 տարիներու ընթացքին, դրացի Թուրքիան ու Ազերպայճանը 60% աճեցուցին իրենց բնակչութիւնը):

Ոգեկան յեղափոխութեան երկրորդ երեսակն ալ գրական, լեզուամտածողութեան հարցն է: Շատեր այսօր կը կրկնեն, որ Հայաստանի երրորդ Հանրապետութիւնը առաջինի ժառանգորդն է, քանի հոն կը ծածանի Եռագոյնը եւ կը հնչէ «Մեր Հայրենիք»-ը: Բայց գրական, լեզուական մարզին մէջ ան յամառ հետեւողն է ոչ միայն խորհրդային Հայաստանին, այլեւ՝ կարմիր վարչակարգի ամենէն վայրագ շրջանին (1920-1940), երբ Հայաստանի Ընկերվարական խորհրդային Հանրապետութիւնը դարձեր էր Հայկական Սոցիալիստական Սովետական Ռեսպուբլիկա...: Այլեւս մեր սուգը ըրեր ենք ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ վերադարձի մասին եւ համոզուեր, որ Մեսրոպ Մաշտոցը յաւիտենապէս վտարուեր է Հայոց ձեռքը մնացած պատառ մը հողէն: Բայց ինչո՞ւ ձգել որ Պօղոս Մակինցեանները շարունակեն աղաւաղել հայերէնը: Պրն.



վարչապետ՝ արգիլեցէք, նախ պետական այրերու բերաններէն դուրս շարտեցէք կոռուպցիա, ակցիա, ֆրակցիա, կոմպոզիցիա, կոնսերվատորիա եւ ասոնց պէս ռուսերէնին բովէն անցած օտար բառերը, որոնք կու գան կեղտոտել մեր լեզուն, ինչպէս շունը իր կղկղանքով կը կեղտոտէ նոր իջած մաքուր ճերմակ ձիւնը: Վերցուցէք մոնտաժել, ապամոնտաժել եւ ասոնց նման ահաւորութիւնները. հայերէնի բառարանը լեցուն է ասոնց ոչ թէ մէկ, այլ մէկէ աւելի հոմանիշներով: Մի անգամ ընդմիշտ վտարեցէք սովետա-հայաստաներէնը եւ անոր տեղ իր պատուանդանին վրայ բարձրացուցէք անոյշ, մաքուր ու զուլալ արեւելահայերէնը, զոր կը սիրենք մեր պաշտած արեւմտահայերէնին չափ: Արեւելահայերէնին մէջ, ինչպէս՝ արեւմտահայերէնին, Էական բային սահմանական եղանակին ներկայ ժամանակին եզակիի խոնարհումն է եմ (je suis), ես (tu es), Է (il est): Բոլորիդ բերաններէն վտարեցէք կոշտ ու կոպիտ ա-ն. եթէ կրնանք մարսել, որ այսպէսը Էսպէս հնչուի, անընդունելի է որ երրորդ դեմքին Է-ն դառնայ ա, Էսպէս ա:

Յարգելի պարոնայք – եւ շատ են պարոնները, ներսը թէ դուրսը,– որոնց ուղղուած, հասցեագրուած է այս գրութիւնը – ներեցէք որ Սփիւռքի մէկ անկիւնէն պարզ, շարքային Յայ մը, որ հայկական դպրոցի երեսն անգամ տեսած չէ, գայ եւ ձեզի յիշեցնէ, թէ ԱԶԳԻ ՄԸ ՈԳԻՆ ԻՐ ԼԵԶՈՒՆ Է:

Ս. Պ.

2019 Փետրուար 22

Մարտիլիա

Աղբիւր՝ ՆՈՐ ՅԱՌԱԶ

Տեսակէտ

Խոհեր՝ Մայրենի Լեզուի Օրուան առիթով. երբ կ'ամչնանք հայերէն խօսելէ (21 Փետրուար) ՀԱՄԲԻԿ ՊԻԼԱԼԵԱՆ



Չայրենիքէ հեռու ըլլալու իրողութիւնը շատերու համար պատճառ է եղեր, որ անոնք չխօսին իրենց մայրենին, միաձուլուին տուեալ երկրի «պատկանելիութեան» հետ եւ, իբրեւ «տիպար» աշխարհաբաղաբացի, սորվին օտարի լեզուն, իւրացնեն անոր բարբերը, տէր ըլլան պատմութեան եւ մշակոյթին, այլ խօսքով՝ համարկուին տեղական միջավայրին ու մթնոլորտին մէջ, որպէսզի կարենան օգտուիլ պետական թէ հանրային

բարիքներէ եւ ապահովեն իրենց ապրուստը:

Այսպէս, անոնք տակաւ առ տակաւ կը հեռանան իրենց ինքնութենէն եւ մոռացութեան կու տան անուն-մականուն, արեան ժառանգութիւն, ազգային լեզու, պատմութիւն, մշակոյթ եւ պատկանելիութեան զգացողութիւն:

Ու այսպէս դարեր շարունակ հայու տխուր օրագրութեան մաս կազմող նման վիճակներ արձանագրուած են, եւ ցարդ մենք ականատես կ'ըլլանք անոնց, հակառակ հայաշունչ գաղութներու գոյութեան, հայրենի պետութեան վերականգնման եւ արդի հաղորդակցութեան միջոցներու առկայութեան:

Ի դէպ, տղայական արտայայտութիւն պիտի ըլլար ամբողջապէս յանցանքը բարդել հայ անհատին ուսերուն՝ մեղադրելով զայն իր օտարամոլի մօտեցումին եւ կեցուածքին համար, այլապէս դատապարտելու, որ ան կամովին հեռացած է իր ինքնութենէն, մայրենի լեզուէն ու առհաւական ժառանգութենէն, ինչպէս նաեւ՝ նզովելու, որ ան առանց դոյզն չբեղանքի իր զաւակները յանձնած է օտար վարժարանի կրթութեան եւ օտարոտի բարբերու իւրացման:

Եթէ երբեք գոյութիւն ունին տարբեր բացատրութիւններ կամ արդարացումներ որոշ պարագաներու, այլապէս ալ ինչպիսի մօտեցում պետք է ցուցաբերել բոլոր անոնց հանդէպ, որոնք գիտակցաբար ու կամովին իրենց զաւակները կը գրկեն հայեցի դաստիարակութենէ ու մեսրոպաշունչ մթնոլորտէ:

Իրօք, ինչպէ՞ս հասկնալ այն երեւոյթը, որ սկսած է տարածուիլ ահագնօրէն, երբ հայ վարժարան աւարտած ծնողք(ներ) մը, իր զաւակները կ'ուղարկէ օտար վարժարան՝ յանձն առնելով եռապատիկ նիւթական պարտաւորութիւն, պարզապէս յագուրդ տալու իր օտարամոլի բարդոյթին եւ շրջապատի ազդեցութեան:

Ի՞նչ բացատրութիւն տալ այն հայ ծնողքին, որ, զոհ դառնալով շռայլամիտ եւ զեխ կեանքի փշրանքներուն, իր զաւակները կը յանձնէ օտարի կրթութեան, սակայն կը փափաքի, որ անոնք շաբաթը մէկ ժամ հայերէն սորվին ու մօտ ըլլան հայ կեանքին:



Նորահաս սերունդի մօտ ապագային վերաբերումը այնքան սկսած է արմատ նետել, որ հետագայ տարիներու ակերները արդէն զգալի կը դառնան հայ կեանքին մէջ: Փաստօրէն, հայ երիտասարդ-երիտասարդուհին համալսարանական կեանքի ընթացքին թէ տարբեր առիթներու կը նախընտրէ օտար լեզուով (անգլերէն, ֆրանսերէն, արաբերէն) խօսիլ իր հայ դասընկերոջ հետ, պարզապէս «խելացի» կամ «նորարար» երեւնալու մարմաջէն տարուած:

Հարկ է միանգամայն շեշտադրել, որ օտար լեզուներու տիրապետումը ակելի քան հրամայական եւ անհրաժեշտութիւն է մեզի համար, քայլ պահելու արդի կեանքի ու գիտութեան պարտադրանքներուն հետ: Իսկ իբրեւ հայութիւն օտար լեզուներու հետ մօտէն առնչուիլը ոչ միայն հարստութիւն է, այլեւ՝ քաղաքական հասունութեան մակարդակ եւ տարբեր մշակոյթներու ծանօթացման պատեհ առիթ:

Մտահոգիչը կը մնայ այն, որ օտար լեզուներու իմացումը կամ ծանօթացումը կ'ըլլայ ի հեճուկս հայոց լեզուին, կը դառնայ ողբերգութիւն, երբ անհատ մը, հաւաքականութիւն թէ գաղութ տակաւ կը կորսնցնէ մայրենին ու «կը գերեվարուի» տեղույն լեզուին կողմէ, պարզապէս օր մը կոչուելու՝ ծագումով հայեր:

Իսիզախ հայ անհատը, ղեկավարն ու պատասխանատուն պէտք է ունենայ բաւարար քաջութիւն ցոյց տալու մետալին միւս երեսը: Այսինքն՝ չի բաւեր յանցաւոր տեսնել դիմացինը՝ օտարամոլը, այլ պարտաւոր ենք իբրեւ ազգ, պետութիւն ու գաղութահայ իրականութիւն դուրս գալ կաղապարուած մտածելակերպէ եւ ամէն ճիգ ի գործ դնել հզօրացնելու պաշտպանական համակարգը՝ մայրենին, կիրառելու այնպիսի միջոցներ (նիւթական ու բարոյական), որդեգրելու ձեւեր եւ ստեղծելու անհրաժեշտ պայմաններ, որոնցմով կարելի պիտի ըլլայ նուազագոյնի հասցնել գործուած ակերը, ինքնութեան ու արժանապատուութեան կորուստը:

Գաղտնի՞ք մը յայտնած կ'ըլլանք, եթէ երբեք բարձրաձայն գոչենք, թէ առանց մայրենի լեզուին ի՞նչ հայութիւն, ի՞նչ հայրենիք ու ապագայակերտ աշխատանք:

Առանց ոսկեղինիկի պաշտպանութեան, ի՞նչ պայքար ու յաղթանակ:

Յաճախ կը կարդանք, առաւել՝ կ'իմանանք, եւ սա բացայայտ իրողութիւն է, որ պետութիւններ (հզօր թէ տկար) աներեւակայելի գումարներ կը ծախսեն, ճիգ ու կորով կը ներդրեն, մարդուժ կը տրամադրեն՝ պահելու եւ պահպանելու իրենց մայրենին, որպէսզի առաջին հերթին կարենան մաս կազմել արդի կեանքին ու քաղաքակրթական նուաճումներու, եւ ապա իրենց, այսպէս ըսած, նուրբ ազդեցութիւնը բանեցնելու շրջապատին, աշխարհին:

Փաստօրէն, ի՞նչ բանի պիտի ծառայեն գաղութահայ կեանքի կառոյցները, հայապահպանման օճախները, կազմակերպուած գիտական ժողովները, տարբեր բնոյթի խորհրդաժողովները, տասնամեակներու նուիրական աշխատանքները, հայը հա՛յ պահելու համոզմունքն անգամ, եթէ երբեք օր-օր եւ մեր աչքերուն դիմաց հայրենը՝ մեծասքանչը կը դադրի ազգային գոյութենական արժէք ըլլալէ եւ մասամբ նորին:

Հարկաւոր է, եթէ ուշացած չենք, ազգովին՝ ի հայրենիք թէ սփիւռս աշխարհի, յայտարարել հայոց պաշտպանական համակարգի՝ հայրենին տեր կանգնելու մեր հաւաքական նախանձախնդրութիւնը, ծնունդ տալով համազգային կշիռ ունեցող կառոյցներու եւ մարդուժի, յանուն գալիք սերունդներու փրկութեան:



Յառաջադեմ երկիրներ առաւել զարգանալու համար կ'աշխատին օրն ի բուն, արմատախիլ ընելու ներազգային կեանքի ու պետական մակարդակի փտածուծութիւնը, կաշառակերութիւնը, որպէսզի կարենան առողջ հիմերով հասարակութիւն ունենայ, տիպար արդարադատական համակարգ ձեւաւորել եւ ազգային արժէքները ոգի ի բռին պաշտպանել:

Գաղութահայ կեանքը պիտի կարենայ վերականգնիլ, բարգաւաճիլ, իմաստ ունենայ, եթէ երբեք որոշէ ստեղծել համապատասխան համակարգ, որպէսզի առաջին հերթին տեր կանգնի մայրենիին, ապա՝ հետագայ սերունդներու ճակատագիրին:

Գրական-Մշակութային

ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ԵՐԿՆԱՌԱՔ ԲԱՌԵՐՈՒՄ

Մերթ անձրեւի պէս յորդառատ տեղացիք դուք, բառե՛ր անգին
Երկնի համն ու բոյրը բերիք ծարաւ հոգւոյս, ծարաւ սրտիս
Երկնի զուլալ ու բիւրեղեայ հիւթը բերիք պապակ շուրթիս
Յոգիս կարծես երկինք դարձաւ ձեր տեղումով լուսածաղիկ...
Մերթ զլացաք դուք անձրեւել գերթ երկինքը մառախլապատ
Ու յոյզերս մընացին լուռ ու բանտուած սրտիս մէջ փակ
Ելք չգտան, կապարացան, սպասելով պահին հըրաշք
Երբ երկունքը դառնայ ծնունդ ձեր բառերուն սիրածորան...
Եւ ես գիտցայ որ արարման համար պիտ' արժանի ըլլա՛մ
Մաքրելով միշտ սիրտս, հոգիս տիղմէն, ժանգէն առօրեական
Որ սափորին մէջ իմ սրտին տեղա՛ք, տեղա՛ք վարդաբուրեան
Ձերթ երկնառաք անձրեւ ու շող կա՛թ-կա՛թ ցաթէք սիրավարար...

ԵՐԱՆ

.....

ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ

Մարդիկ յաճախ քեզ փնտռեցին

ճոխ ու շուայտ կերուխումին



Դղեակներուն մէջ հոյակերտ
Կուտակած բիւր ինչքերու մէջ...
Կարծեցին քե՛զ գտած ըլլալ
Ադամանդեայ զարդի մը մէջ
Յագուկապին շքեղափայլ
Յաճոյքներուն մէջ մարմնեղէն...
Քիչեր միայն խորզացին
Յամդ, բոյրդ քու ոգեղէ՛ն
Բիւր աստեղաց թարթումին մէջ
Իրաւ սիրոյ ակնթարթին
Սիրտէն բխած շո՛ղ մը ժպտին
Յրեղէն խօսքի մը դիւթանքին
Բարի գործին մէջ լուսածին
Յուքին վսեմ գեղեցիկին..
Բայց դուն կայիր քիչ մ'ամէնուր
Թրթի՛ռ մը լոյս սիրահամբոյր
Յե՛ւք մը գոլին վառ սիրտերուն
Գո՛յն մը ծիածան հոգիներու
Լռութեան մէջ բազմաբեղո՛ւն
Խոկումներո՛ւն ճշմարտախոյզ
Յոյզերուն մէջ սիրաքնքո՛ւշ
Արարման մէջ աստուածատո՛ւր...
Դուն կը տրուիս երկնապարգե՛ւ
Ինչպէս երկի՛նք, ա՛ստղ ու արե՛ւ
Բայց դեռ մարդիկ քե՛զ կ'որոնեն
Ոսկի հորթի սին փայլքին մէջ
Եւ կեանք մ'ամբողջ գուցէ վատնեն



Կորսնցնելով քեզ հե՛ւ ի հե՛ւ...

ԵՐԱՆ

.....

ՄԻՏՔԵ՛Ր, ՄԻՏՔԵ՛Ր

Միտքե՛ր, միտքե՛ր, դուք կը սլանաք երկինքն ի վեր

Ազատ, անսանձ, ճիշդ լոյսին պէս միշտ անարգել

Կը թափառիք երկնքին մէջ, երկնքին մէջ՝ դուք երկինքնե՛ր

Ազատութեան շունչ կը բերէք, նոր աշխարհներ լուսապարգեւ...

Ձեզմով ճախրեմ անհունին մէջ, հորիզոնէ նոր հորիզոն

Ձեզմով հիւսեմ նոր երազներ լուսահեղեղ, լուսակարօտ

Ձեզմով չկայ սահմանագիծ թռիչքներու երկնասլաց

Ձեզմով կ'ըլլամ հաղորդակից տիեզերքի անհունութեան...

Դառնամ բնակիչ աշխարհներու, հոգիներու հեռագնայ

Մտնեմ ամէն սիրտերէն ներս, յոյզը զգամ մարդ Էակին

Դեռ որոնեմ նո՛ր-նո՛ր խոհեր ու տեսիլքներ արեւափայլ

Եւ նորոգուիմ ու թարմանամ ազատութեամբ հոգեթռիչ:

ԵՐԱՆ

.....

ՉԱՊՐՈՒԿԾԻՆ ԵՐԱԶԸ

Ինձի մնաց ապրած կեանքիս հետքը լուսէ

Ու չապրածիս երազն անմար որ հուրհրատէ

Ըսած խօսքիս արձագանգը որ կը հնչէ

Ու չըսածիս լռութիւնը որ կը հեծէ...

Ինձի մնաց տուածներու բերկրանքն անմար

Չտուածիս մղկտանքը լուռ, հոգեմաշ

Ընծայածս վերադարձաւ բիւրապատիկ

Չընծայածս թառամեցաւ, մեռաւ յուշիկ...



Ինձի մնաց տենդն անաւարտ որ հուրհրայ
Բիւր-բիւր տենչեր որ կեանքի լոյսն դեռ կը տենչան
Թեւաւորեն դեռ իմ հոգին արփիւածաւ
Չիս կ'ընծայեն դեռ պարման սիրտ մը տարփաւառ
Որ կ'երազէ արշալոյսներ որ պիտ' բացուին
Աստղածորան բիւր գիշերներ սիրափոթիթ
Ու բեհեզայ զգեստ հազած պարմանուհին
Որ աստղիկներ պիտ' հաւաքէ մէկի՛կ-մէկի՛կ..

ԵՐԱՆ

.....

ԱՆԴՐԱԴՐԱՐՁ

Ի՛նչ բառեր կան մեր սրտին մէջ
Որոնք պիտի չըսուին երբեք
Լուռ արտասուեն այնտեղ յուշիկ
Չըսուած խօսքի ցաւով լռին...
Ի՛նչ յոյզեր կան մտքի, սրտի
Որ անթեղուած պիտի ապրին
Մոխիրին տակ առօրեային
Պիտ' ամլանան ու կորսուին...
Ի՛նչ պահեր կան որ պիտ'անցնին
Դրոշմն անոնց յետոյ պիտ'զգանք
Եւ պիտի լանք կորուստն անդարձ
Պահերուն այդ անկրկնելի...
Սիրող սրտին գգուանքը տաք
Պիտի զգանք երբ ա՛լ չկայ
Ներկայ պահը պիտ'ըլլայ թանկ
Երբ ան դարձած Է ա՛լ անցեալ...



ԵՐԱՆ

.....

ԿԵԱՆՔԸ ՍԵՐ Է

Սերը լոյսն է առաւօտեան

Յօղը վճիտ ծաղկանց վրայ

Բուրմունքն անոնց սիրավարար

Բի՛ւր բի՛ւր թոյրերն հոգեհմայ...

Սերը դայլայլն է հաւքերուն

Դողը մեղմիկ տերեւներուն

Որ կ'օրհներգեն լոյսը բարի

Չիրար գրկեն սիրաթրթիռ...

Սեր կայ ժպտին մէջ մանուկին

Պարման սրտին, ալեւորին

Սեր կայ խօսքին ու բառին մէջ

Թէ կը բխին անկեղծ սիրտէն..

Երկինքն համակ, լուսին, աստղեր

Արարիչին սիրոյ ցոլքն են

Տիեզերքը անեզրական

Սիրերգութիւն ծիրանավառ...

Կեանքը ամբողջ սիրոյ ծնունդ է

Որ ամէն պահ կը բողբոջի

Բանայ ծաղիկ ու ծիածանէ

Սիրտերն իրար սիրապարգէւ:

.....

ՄԻ ԲՈՒՌ ՑՈՐԵՆ

ՍԷ՛ր քաղցի ծաղիկներէն, խոտէն խոնարի, դաշտ ու անդէն

Մայրամուտի վառ ծիրանէն ու հրդեհուող հորիզոնէն



Գգուանք մը լո՛յս՝ օրօ՛ր-շորո՛ր լուսաթրթիռ տերեւներէն
Մթան մէջ լոյս պսպղացնող ջահավառեալ աստղիկներէն..
Շաղախեցի զանոնք հոգւոյս ու իմ սրտի տաք քուրային
Բոցկլտացին լոյս հրդեհներ արարումին իմ ցնծագին
Ծնունդ տուին վառ տողերու մեղեդիին հըրաշածին
Որ երգեցի սիրով խնդուն ու հոգիով երախտագին...
Եւ չեմ գիտեր թէ ո՞վ յուշեց բառ ու խօսքերն մեսրոպաւանդ
Բառարանի ո՞ր էջերէն կա՛թ-կա՛թ եկան իմ գրչիս տակ
Յաւաքեցի սիրտով խոնարհ ու շարեցի ինձ ընծայուածն
Յայրենական մի բուռ ցորեն՝ նօթի սրտիս լուսածարաւ...
ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Գրական-Մշակութային

Կոմիտաս (1869-1935)

Նայ Երզի

«Անլռելի Զանգակատունը»

Գրեց՝ ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ



«Երզիչի կարողութիւններս մէկ նպատակի կը ծառայեն. իմ մեծ ժողովուրդիս երգն ու երաժշտութիւնը ծանօթացնել երաժշտական աշխարհին եւ ապացուցել, որ հայ ստեղծագործ ժողովուրդը՝ սկզբնական դարերէն ունեցեր է իր ինքնուրոյն երգն ու երաժշտութիւնը»:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Յայտ. Առաքելական Մայր եկեղեցին, գլխավորութեամբ՝ Գարեգին Բ. հայրապետին, 2019-ին աշխարհի բոլոր ցամաքամասերուն վրայ գործող եկեղեցիներով պիտի նշէ

Կոմիտաս մեծագործ վարդապետին ծննդեան 150-ամեակը եւ պիտի ոգեկոչէ հայ երգի «Անլռելի զանգակատան» անմոռաց յիշատակը:

Կոմիտաս վարդապետ (աշխարհիկ անունով՝ Սողոմոն Սողոմոնեան), ծնած է 1869-ին, Քէօթահիա քաղաքը: Յայրը՝ Գեորգ Սողոմոնեան, կօշկակար էր, շատ գեղեցիկ ձայնով օժտուած անձ մը, որ երգեր կը գրեր եւ կը կատարեր, արժանանալով ունկնդիր հասարակութեան ջերմ գնահատանքին: Մայրը՝ Թագուհին, նոյնքան գեղեցիկ ձայնով օժտուած էր: Ան գորգահիւսութեամբ կը զբաղէր:

Սողոմոնի մանկութիւնը շատ տխուր եղած է: Փոքր տարիքին կը կորսնցնէ իր մայրը, քանի մը տարի ետք՝ 11 տարեկանին կը կորսնցնէ հայրը: Փոքրիկն Սողոմոնը ֆիզիքականով շատ տկար եւ մտածկոտ մանուկ մը եղած էր:

1881-ին Քէօթահիոյ եկեղեցւոյ վարդապետ Գ. Դերձակեան Էջմիածին կը մեկնէր եպիսկոպոսական ձեռնադրութեան համար: Իր հետ կը տանի որբուկ Սողոմոնը, որ թէեւ հայերէն չէր գիտեր, բայց հրաշալի ձայն ուներ. զայն կը տանի Գեորգեան ճեմարան՝ սան արձանագրելու:

Էջմիածին հասնելով, Սողոմոնը Գեորգ Դ. վեհափառին կը ներկայանայ: Երբ վեհափառը հարցեր կու տայ փոքրիկին, Սողոմոնը կը պատասխանէ թրթրելով, թէ ինք հայերէն չի գիտեր: Այնպէս, ինչպէս Օսմանեան կայսրութեան մէջ ապրող Յայերուն մեծամասնութիւնը՝ հայերէն խօսի,



գրել, կարդալ չէր գիտեր: "Բայց եթէ կ'ուզէք՝ կ'երգեմ", կ'ըսէ Սողոմոնը վեհափառին, եւ կ'երգէ հայ եկեղեցւոյ նուիրուած շարականը, խոր յուզում պատճառելով վեհափառին:

Իբրեւ բացառիկ կարգադրութիւն՝ Սողոմոնը Էջմիածնի Դպրեվանքը կ'ընդունուի իր ծայնին համար: Սակայն մէկ տարուան ընթացքին ան հայերէն խօսիլ, գրել եւ կարդալ կը սորվի:

Փոքրիկն Սողոմոնը Էջմիածնի մէջ կ'արժանանայ վեհափառին եւ բարձրաստիճան կղերականներու ուշադրութեան, անոնց սիրոյն ու յարգանքին: Իսկ վանքի այս ժառանգաւորը ոչ թէ ամէն տարի, այլ՝ ամէն օր կը հասուննար եւ կը հրաշագործէր հայ երգի ու շարականներու կատարելագործութեամբ եւ կրօնագիտութեամբ:

Ան 1893-ին կը ձեռնադրուի վարդապետ եւ կը ստանայ Կոմիտաս անունը, որ 12-րդ դարու ծանօթ Կոմիտաս արուեստագետին անունն էր:

Կոմիտաս վարդապետ՝ իբրեւ երգի ուսուցիչ, խմբավար եւ երաժշտագետ, ստեղծագործեց տիւ եւ գիշեր գործելով: Ան բազմաթիւ ճամբորդութիւններ կը կատարէր հայկական գիւղերը եւ հայահոծ քաղաքները այցելելով, հայ երգի ակունքներէն հայ երգը կը հանէր, կը մաքրագտէր եւ ժողովուրդին կը ներկայացնէր, անգնահատելի գանձեր դիզելով հայ երգարուեստի գանձարանին մէջ:

1910-ին, Կոմիտաս կը մեկնի Պոլիս: Հոն եւս, հոգեւոր ծառայութեան կողքին կը զբաղի հայ երգով ու երաժշտութեամբ: Կը շարունակէ երգահաւաքի ու երգագտումի իր գործը: Պոլսոյ մէջ կը հիմնէ 300 անդամներէ բաղկացած «Գուսան» հռչակաւոր քառածայն ժողովրդական երգչախումբը, որ մեծ համբաւ կ'ունենայ եւ խանդավառութիւն կը ստեղծէ ժողովուրդին մօտ: Այդ տարիներուն էր որ կը մշակէ Ս. Պատարագի Կոմիտասեան կատարումը, որ մինչեւ օրս կ'երգուի շարք մը եկեղեցիներու մէջ:

ԿՈՄԻՏԱՍ

ԵՒ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

1915-ի Հայոց ցեղասպանութեան սկիզբի օրերուն, մեծն Կոմիտասն ալ կը ձերբակալուի եւ Անատոլիա կը դրկուի: Հոն էր որ զգայուն սիրտի տէր Կոմիտասը կը տեսնէ հայ մեծամեծ գրողներու, գործիչներու, կղերականներու հաւաքական չարչարանքները, դժբախտութիւնը, որոնք խորապէս կ'ազդեն երիտասարդ կղերականի հոգիին, միտքին ու սիրտին վրայ: Այդ բոլոր սրտաճմլիկ տեսարանները տանիլ չկարենալով, կը խելագարի մեր անմահն Կոմիտասը եւ ազդեցիկ մարդոց միջամտութեամբ Փարիզ կը տարուի բուժուելու: Սակայն այլեւս բուժումի ոչ մէկ յոյս կար եւ 1935-ին իր մահկանացուն կը կնքէ հայ երգի ու երաժշտութեան այս երախտաւոր վարդապետը: Հանգուցեալին մարմինը Հայաստան կը տարուի եւ կը թաղուի հայ մեծանուն արուեստագետներու Պանթէոնին մէջ, ժողովրդային ծովածաւալ բազմութեան մը մասնակցութեամբ եւ աշխարհի գանազան շրջաններէն ժամանած մեծ արուեստագետներու ներկայութեամբ:



ԿՈՄԻՏԱՍ ՄԱՐԴԸ

Կոմիտասի կենսագրական գիծերու այս ամփոփումէն ետք կ'ուզէի յիշել, որ այս խոհուն, լուրջ, խիստ եւ պահանջկոտ կղերական-մանկավարժը, իր ազատ եւ հանգիստ ժամերուն, ընկերներու եւ բարեկամներու շրջանակին մէջ, զուարճախօս, կատակաբան, վառվռուն անձ մըն էր: Չիկա մօտէն չճանչցողները մեծ երգահանին մասին զարմանքով կ'ըսէին, թէ ան արտակարգօրէն հաճելի սրախօս էր:

Կոմիտասին մօտէն ճանչցողներ կ'ըսէին, որ ան բնաւ բարկանալ չէր գիտեր: Ամենալուրջ խօսակցութեան մէջ ալ Կոմիտաս վարդապետ կատակ մը կամ թեթեւ զուարճախօսութիւն մը կը խառնէր այդ խօսակցութեան:

Գրուած է, որ Կոմիտաս ուշադրութիւն կը դարձնէր բառերու շեշտադրութեան վրայ: Ան միշտ կը ծաղրէր այն դպիրները, սարկաւազները կամ կղերականները, որոնք տարօրինակ շեշտեր կը դնէին վանկերու վրայ, որոնց շեշտադրութեան կարիքը չկայ:

1913-ին, Պոլսոյ Սուրբ Հրեշտակապետ Մայր տաճարին մէջ նստած Ս. պատարագի երգեցողութեան կը հետեւէր: Երբ դպիրը կը սկսի թրքական շարքիներու եւ նանիներու պէս «բաշել» «ազատութիւն» բառը, Կոմիտաս չի հանդուրժեր...: Ս. պատարագի ավարտին, Կոմիտաս վարդապետ կը մօտենայ դպիրին կատակով, բայց լուրջ շեշտով կ'ըսէ. "Տօ՛, զուռնաճի, մի՞թէ կարելի է այդ աստիճան չարչարել մարդկային ազատութիւնը: Եթէ ես Աստուծոյ տեղը ըլլայի, այդ տեսակ ազատութիւն խնդրող մարդուն ստրկութիւն կը շնորհէի": Բազմաթիւ դէպքեր, պատումներ կան Կոմիտաս վարդապետի կատակաբանութիւններուն, սրախօսութիւններուն ու մանաւանդ հաւաքոյթներուն եւ ուրախ առիթներուն՝ անոր շէն ու շէնշող կեանք սփռող ներկայութեան մասին:

Կոմիտաս վարդապետ ազատ ժամերուն նարտի խաղալ շատ կը սիրէր, եւ միշտ իր մրցակիցը շատ լաւ խաղացող պիտի ըլլար, որ անոր հետ նարտի խաղալու նստէր: Երբ յաղթէր, անմիջապէս պարտուողին կ'ըսէր. "Դէ գնա՛ պապայիդ բարեւ տար եւ սորվէ նարտի խաղալ": Իսկ պարտութեան պարագային, միշտ նարտին կը ձգէր եւ արագ մը կ'անհետանար՝ ըսելով. «Շատ գործ ունիմ ընելիք»:

* * *

Կոմիտասի մեծագոյն առաքելութիւնն էր ցոյց տայ, որ հայը ունի իր ինքնուրոյն ազգային խոր ակունքներէն բխող հայ երգ ու երաժշտութիւն: Եւ ասիկա փայլուն ձեւով ներկայացուց աշխարհի շատ մը ժողովուրդներուն եւ երկիրներուն: Ան հայ երգը բազմիցս տարաւ Եւրոպա, երգչախմբային կամ առանձին ելոյթներ ունենալով ամենայայտնի համերգասրահներու մէջ եւ հայ երգի սիրով համակեց օտար բազմաթիւ մեծանուն արուեստագետներու հոգիները եւ արժանացաւ անոնց հիացմունքին եւ բարձր գնահատանքին:

Կան Կոմիտաս վարդապետի կատակաբանութիւններով, սրախօսութիւններով համեմուած եւ մանաւանդ ձայնի քաղցրութեան մասին բազմաթիւ պատումներ, որոնք մեր գրականութեան անթառամ գանձերն են: Այդ բոլորը՝ նշեալ գրութիւններուն մէջ յիշուած եւ գնահատուած են արուեստի բազմաթիւ տիտաններու կողմէ, որոնք ամենաջերմ խօսքերով եւ բառերով գնահատած են մեր անմահ Կոմիտասի գործերը:



Կոմիտասին եղած են զանազան առաջարկներ իրենց մօտ գործելու, Գերմանիոյ մէջ ուսանողութեան շրջանին, Պուլկարիոյ թագաւորութեան կողմէ եւ այլն: Կոմիտաս բոլորն ալ մերժած է՝ ըսելով. "Ես վարդապետ եմ, իմ տեղս հայ եկեղեցին է":

Կոմիտաս, ականատեսը ըլլալով իր գործի յաղթանակին, երբ հարց կու տան իրեն այդ մասին՝ իր գործը մեծագոյն յաջողութեամբ պսակած մարդու մը գոհունակութեամբ կ'ըսէ. "Ամենէն անելի զիս յուզեց այն բանը, որ օտար հեղինակաւոր երաժշտագետներ, լսելով իմ բացատրութիւնները՝ երգերը հասկցան եւ համոզուեցան որ աշխարհի վրայ կայ հայ երաժշտութիւն ինքնատիպ եւ ինքնուրոյն այնպէս, ինչպէս հայ լեզուն եւ հայ կեանքը, մինչդեռ մեր ժողովուրդը դեռ կը տարակուսի, թէ ինքը լեզու ունի՞, երաժշտութիւն ունի՞, կեանք ունի՞":

Խ. Ճ.



ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Պաշտօնը չէ որ քեզ կը բարձրացնէ, այլ՝ ընդհակառակն, մարդկային որակդ է որ կրնայ իմաստաւորել ու արժեւորել ստանձնած պաշտօնդ:

.....

Բառերէն անդին կայ խոսքը...Խօսքէն անդին կայ կեցուածքը...Կեցուածքէն անդին կայ վերաբերմունքը...Վերաբերմունքէն անդին կայ արարքը՝ յստակ, տեսանելի, զգալի, գործնական...

.....

Դեռ որքան գաւառամտութիւն կայ մեր մէջ, ուրիշին կարծիքը չհանդուրժելու նեղմտութիւն, առողջ բանավէճի պակաս, ամէն ինչ մեր չափով ու կշիռով դատելու մտքի կաղապար, ամէն ինչի մէջ սեւը տեսնելու ժխտողականութիւն, մէկը միւսին դէմ տրամադրուելու անառողջ հոգեվիճակ, մերը միայն ճիշդ նկատելու միակողմանիութիւն...Ե՞րբ լայնախոհ պիտի ըլլանք եւ լայնահորիզոն մտածենք...

.....

Երբ մեծութեան մը քով կ'ապրինք, չենք ալ նկատեր զայն, երբեմն զայն կը ժխտենք, նոյնիսկ կը հալածենք զայն՝ մեր բամբասանքներով, մեր չարախօսութեամբ, մեր նախանձով...Յետոյ, երբ ան ա՛լ չկայ, կ'աւաղենք, կ'ափսոսանք եւ կը մեծարենք անոր բացակայութիւնը...: Չեմ գիտեր թէ ինչո՞ւ է այդպէս...Բայց լեռան մը բարձրութիւնն անգամ կը նշմարենք, երբ հեռուէն կը դիտենք զայն:

.....

Չայ ըլլալը քարոզելով, խրատելով չըլլար...Մարդ էակը կամ կը զգայ զայն իր երակներուն մէջ, իր սրտի տրոփիւնին մէջ, իր հոգիին, Էութեան խորքը...կամ ալ չզգար զայն...Չեմ գիտեր ո՞ր կը կայանայ բուն գաղտնիքը...Մօր կաթին հետ կու գայ ան, օրօրոցային երգերէն մինչեւ այն ամբողջ մթնոլորտը, ուր կը մեծնայ, կ'աճի երեխան՝ մարմնով, հոգիով, միտքով... Պարտադիր հայկականութիւն չի կրնար ըլլալ, ոչ ալ՝ հայրենասիրութիւն...: Մինչ թուրքը ամէն վայրկեան՝ մեծով, պզտիկով, հպարտութեամբ կը պոռայ՝ «Երանի թուրք եմ ըսողին», մենք մեր զաւակը օտար դպրոց կը տանինք, միշտ մտածելով որ օտարին ջամբած ուսումը աւելի լաւ է, օտարին



տուած կրթութիւնը աւելի առողջ է, աւելի որակաւոր է.... Մենք օտարամոլ ժողովուրդ ենք.... Երանի՛ մենք ալ կարենայինք ըսել՝ «Երանի՛ հայ են ըսողին»....

.....

ճիշդն ու սխալը խառնուեր են իրար, կատարեալ խառնաշփոթ մը ստեղծելով....Մարդիկ ալ այնքան յարափոփոխ ու յեղեղուկ են դարձած, ճիշդ արեւածաղիկին նման, անկեցուածք, անսկզբունք, անգաղափար...նայած թէ սեփական շահի ու հաշիւի քամին ո՞ր կողմ կը փչէ...Այսօր ա՛յս կ'ըսեն, վաղը՝ հակառակը, այսօր քեզի հետ են, վաղը՝ միւսին...: Կենսքը ճիշդ ապրելու համար, զօրաւոր յենասիւններ եւ սկզբունքներ, բարոյական արժէքներ են անհրաժեշտ, որոնք տակաւ կ'անհետին մեր ժամանակներուն:

.....

Մարդ էակի ոգին, ներքին կրակն ու հրավառութիւնը շատ աւելին են քան հաշիւը, չոր տրամաբանութիւնը, շուկայիկ մտածելակերպը....Առանց անոնց, չկայ արուեստ, չկայ գեղեցկութեանց մատչելու ներքին խոյանքը, չկայ առօրեայէն վեր բարձրանալու եւ ազատութեան վստմագոյն ոլորտները ընդգրկելու հոգիի սխրագործութիւնը...արարչական տենչն ու տենդը:

.....

Միտքի հորիզոնդ որքան ընդլայնես, կ'ընդարձակիս, կ'իմաստնանաս, կ'ապրիս մեծ կեանքով...Նեղ մտահորիզոնը կը փոքրացնէ մարդը, կը բանտարկէ ես-ը մանրութեամբ մեջ, կը սահմանափակէ հոգիի թռիչքը եւ պարիսպ ու պատնէշ կը ստեղծէ ես-ին ու մեծ տիեզերքին միջեւ...

.....

Ներքնատեսութիւն....կամ ներքին աչքերով տեսնել կարենալը...: Պարզ աչքերը կը բաւե՞ն արդեօք տեսնելու համար երեւոյթներու խորքը, զգալու հոգին, ըմբռնելու համար դէպքերու եւ ինդիքներու ներքին կապը, եթէ չունենաս ներքնատեսութիւն, որ ներգգայական կամ յայտնատեսական կարողութեան նման, կարելի կը դարձնէ թափանցելու իրականութեան արտաքին շերտերէն ներս, տեսնելու իրերու խորքը, երեւոյթներու եութիւնը, մարդկային հոգին....Հազուագիւտ են անոնք, որոնք ունին այս յատկանիշը, որուն շնորհիւ անչափ կը հարստանայ, կը խորանայ իրենց գիտակցութիւնը, կ'ընդլայնին իրենց ճանաչողութեան սահմանները, կ'ըմբռնեն, կը տեսնեն աւելին քան ինչ որ կայ, քան ինչ որ կ'երեւի պարզ հայեացքով...Չեմ գիտեր, եթէ այս յատկանիշը ձեռքբերովի՞ է, թէ՛ բնածին...: Երանի կարելի ըլլար զայն դաստիարակել մեր մատղաշ սերունդին մօտ, եւ ճանաչողութեան ու գիտակցութեան նոր որակ ձեռքբերել հայ հանրութեան համար...

.....

Ազնուութիւնը, բարութիւնը, գութն ու կարեկցանքը...կը բխին բնութենէն մարդ անհատին եւ ցուցաբերուելու են բոլորին հանդէպ, անկախաբար անոնց մեզի հանդէպ ունեցած վերաբերմունքէն...անկախաբար զանոնք արժանի թէ ոչ-արժանի դատելու մեր հակումէն...Այլապէս այդ զուտ մարդկային ու բարոյական յատկանիշները պիտի դառնային պայմանաւոր, սակարկութեան ենթակայ...կորսնցնելով իրենց արժանիքը...եւ մեր



վարուելակերպը պիտի դառնար ենթակայ ուրիշին վարուելակերպին եւ, հետեւաբար, ոչ-ազատ...Բարոյականութիւնը առեւտուր չէ, անիկա անսակարկելի է...

.....

Բառը, մոգական բառը, գիրը, մոգական գիրը, բառերուն շունչ տաը...Սա չէ՞ լաւ գրելուն գաղտնիքը...Շատեր կը գրեն, բայց առաջին իսկ տողէն կամ նախադասութենէն, կը դադրիս գայն կարդալէն...Քանզի չի յուզեր ան, հետաքրքրութիւն չի ստեղծեր, սրտիդ ու մտքիդ չի խօսիր...Ըսելիքը կենդանի, բաբախուն խօսք ու գիրի վերածելը ՇՆՈՐՅՔ է, բառը պիտի զգալ, պիտի ապրի, շունչ պիտի փչել վրան, որ կեանք առնէ, սիրտեդ թրթիռ մը, միտքեդ խոհի գրգիռ մը կարենայ հաղորդել ընթերցողին՝ ջերմ անկեղծութեամբ, սրտաբուխ, ոչ շինծու բառերով...Գրելը արուեստ...

.....

Աղօթքի պէս կը հնչեն Վահան Թէքէեանի խորիմաստ տողերը. «Թող սասանին ու փշրին բարձր բերդերն անառիկ Ու իյնան վար պատնէշները զրահապատ ետութեանց»...Իսկապէս ալ, եթէ այդ ետութեանց պատնէշները իյնան, մենք՝ ազգովին կրնանք սիրտով, հոգիով, միտքով ու կամքով քով-քովի գալ եւ դառնալ անպարտելի, հզօր, անխորտակելի ՄԵՆՔ...Իսկ հայ կեանքին մէջ ի մասնաւորի, այդ «ետութիւնները» անչափ շատ են, շատ անգամ անյաղթահարելի...Եւ դար ու դարեր արգելակեր են հզօր ՄԵՆՔ-ի մը կերտումը...

.....

Դարեր շարունակ, սխալներու Նոյն ոլորապտոյտին մէջն ենք կարծես...Երբ կը կարդանք խորենացիի ողբը, զոր օրինակ, մենք մեզի կրնանք հարց տալ, թէ ի՞նչ հիմնական բան փոխուեր է մեր մտայնութեանց եւ կացութեանցին մէջ...Հայ կեանքը կը թաւալի կրկնելով Նոյն արատները, Նոյն թերութիւնները, որոնցմէ ձերբազատումը, անելի ճիշդ ազատագրումը, կ'ենթադրէ զանոնք անաչառօրէն ընդունիլը, մեր արատներուն համար պատասխանատուութիւն ստանձնելը...առաջին հերթին, քանզի միշտ մեր չար բախտէն միայն կը խօսինք՝ դար ու դարեր...

.....

Ուրիշէն արդարութիւն պահանջելէ առաջ, դուն ինքդ եղի՛ր արդար...

Ուրիշէն անաչառութիւն սպասելէ առաջ, դուն ինքդ եղի՛ր անաչառ...

Ուրիշէն բարի կամեցողութիւն սպասելէ առաջ, դուն ինքդ եղի՛ր բարին կամեցող...

Ուրիշէն ուշադրութիւն փնտռելէ առաջ, դուն ինքդ ուշադիր եղի՛ր...

Ուրիշին վարմունքը շատ անգամ ցոլքն է քու վարմունքիդ...անոր հայելին...

.....

Ո՞Վ Է ՀԱՅՈՒ ՏԵՍԱԿԸ...Մենք միշտ ալ մեզ կը պատկերացնենք որպէս դարաւոր ու փառաւոր մշակոյթ ստեղծած, ոգիի, լոյսի ժողովուրդ...Այդպիսին ալ ենք էապէս...Բայց մեր մէջ եւս չարը բոյն դրած է, մանաւանդ մեր ժամանակներու նիւթապաշտ, շահամոլ ու եսապաշտ



չարժեքներու հոսանքին մէջ: Երկու հակընդդէմ բեւեռներու մէջ լող տալով, ՄԵՆԶ մերթ բարի ու արի, ստեղծագործ եւ աշխատասէր, մերթ ալ՝ վատագի եւ ընչաքաղց, գոռոզ ու ամբարտաւան ենք դարձած, թիավարելով հոսանքն ի վար....Մեզ այսօր այնքան է պետք՝ Նոր վերադարձ դէպի մեր արմատները, մեր ազգային Էութիւնը, որպէսզի չփլուզուինք ներկայ սպառողական քաղաքակրթութեան դէպի ճգնաժամ ընթացող անիւներուն տակ...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Տարի առ տարի կեանք է կը սահի
Հոսանուտին մէջ կեանք-ժամանակի
Կը մնայ միայն ա՛յն ինչ որ տուիր
Միտքէդ, հոգիէդ, սիրտէդ սրտագին...

.....

Բառիդ մէջ դուն տաք սիրտդ դիր
Թող ան շողայ անկեղծութեամբ
Անկեղծ խօսքը դեղ է բուժիչ
Բիր ցաւերուն է բալասան...

.....

Տեսադաշտդ թէ ընդլայնես
Մինչեւ տիեզերքը լայնածիր
Կ'իմանաս որ սոսկ կէտ մըն ես
Համայնին մէջ դուն լուսածիր...

.....

Թէ հարեւանդ ըլլայ նօթի
Իսկ դուն ապրիս շռայլանքի մէջ
Խիղճդ արդեօ՞ք չի տանջեր քեզ



Երբ գլուխդ դնես բարձիդ....

.....

Թէ սեղանդ ըլլայ յորդուն

Բիւր ուտեստով պէսպիսուն

Ուտելիքդ մէկ փոր ճաշ է

Մնացեալը աւելորդ է...

.....

Թէ մարդիկ քեզ չհասկնան

Մի՛ վրդովուիր ու զայրանար

Չասկնալու համար իրա՛ւ

Էական է որ քեզ զգան...

.....

Մէկ բարձրացնեն մինչեւ աստղեր

Մերթ ալ գլորեն անդունդն ի վար

Նայած թէ շահն ի՞նչ պահանջէ

Առեստուր է արժէքն անգամ...

.....

Կարաւանը կ'երթայ առաջ

Կեանքի ընթացք է անսասան

Թէկուզ հազար գայլ ու շուներ

Փորձեն շեղել զայն իր ճամբէն...

.....

Բախտիս անին ձեռքերուս մէջ

Ուղղորդեցի ուր կամեցայ

Սակայն Աստուած ի՛նք որոշեց

Կանգառն վերջին ուր պիտ' ըլլայ...

.....



Ժամանակն ուզեցի բռնել

Արագընթաց ան սահեցաւ

Չերթ գետակի ջուրը գնաց

Կաթիլն անգամ ինձ չմնաց...

.....

Թէ սիրտդ շէն է եւ կեանքով լեցուն

Խարոյկն օճախիդ կը ճարճատի հուր

Ոչ մէկ ձմեռ, ցուրտ սառնամանիք

Կրնայ սառեցնել սիրտդ կենսալի...

.....

Լոուրճեան մէջ շշուկներ կան, անլսելի՛

Բիւր խորհուրդներ կը թրթռան, անքննելի՛

Յոգիս կ'ուզէ քաղել զանոնք, անքաղելի՛

Կը խորզայ գաղտնիքն անոնց, անբռնելի՛

.....

Սիրտը մտքին թէ ունկնդրեր

Յեզ ընթանար կեանքը գուցէ

Բայց հրակեզ բոցով սիրտն է

Որ արեւներ վար կը բերէ...

.....

Ըլլար խաղաղ հիւղակ միայն

Բնութեան մէջ գեղատեսիլ

Բոյր, թոյրերով արբենայի

Երկնի լազուր ժպ'տով միայն:

.....

Ճոխ սեղաններ եւ ուտեստներ

Կրնա՞ն լեցնել մարդուն հոգին



Որ կարօտով մը անձկագին

Դեռ կը փնտռէ հաց ոգեղէն...

.....

Սիրտս մնաց մանկան նման

Չչարացաւ չարին դիմաց

Ներեց, գթաց ան շարունակ

Սիրով յորդուն ան միշտ մնաց...

.....

Յազար գովէ, մարդիկ մոռնան

Թէ մէկ անգամ քննադատես

Խօսքով շիտակ ու սրտացաւ

Ա՛յդ կը յիշեն ու պահեն քէն...

.....

Մարդիկ զբաղած կերուխումով

Յափրացած ալ գինարբութով

Ման կու գային փողոցներով

Ծիլ ու ծաղիկ կոխկռտելով...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ